**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**15 հունվարի 2013 թվականի N Մ- 001 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2013 թվականի հունվարի 11–ի համաձայնեցման թերթիկը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մարսելի Սուրբ Լազար հիվանդանոցի կողմից ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով աջակցության նպատակով «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ուղարկված բեռների (բժշկական սարքեր, սարքավորումներ,գործիքներ և պարագաներ 39 տեղ, 5692 կգ ընդհանուր քաշով, 72954 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 5221.32 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ և «Volkswagen» մակնիշի 2003 թվականի արտադրության շտապ օգնության մեքենա, նույնականացման համարը՝ WV2ZZZ70Z2H067009, 1 տեղ, 1830 կգ ընդհանուր քաշով, 12000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 1678.68 ԱՄՆ-ի դոլար, ԱՄ ՄՁՄ ՄՏ, բեռի ցանկը կցվում է) ներմուծման ծրագիրը:

2. «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ց ՈՒ Ց Ա Կ

| Հ/հ | Ապրանքի անվանումը | Քանակը /հատ/ | Քաշը /կգ/ | Գինը /$/ |
|---|---|---|---|---|
| 1. | Ռենտգեն սարք OR THORAUX-1600 | 1 | 250 | 10500 |
| 2. | Ռենտգեն սարքի էլ. վահանակ A-2 | 1 | 270 | 7500 |
| 3. | Ռենտգեն սարք | 1 | 200 | 8000 |
| 4. | Ռենտգեն սարքի էլ. վահանակ A-1 | 1 | 270 | 7500 |
| 5-9. 22-23-25. | Ռենտգեն սարքի դետալներ | 8 | 1577 | 16590 |
| 10-12. | Ռենտգեն սարքի ստուգիչ սեղան | 3 | 990 | 9500 |
| 13. | Ռենտգեն սեղան | 1 | 1500 | 11500 |
| 14. | Ֆունկցիոնալ մահճակալ | 1 | 25 | 35 |
| 15. | Բազկաթոռ | 1 | 25 | 80 |
| 16. | Շարժական լույս | 1 | 10 | 80 |
| 17. | Շտատիվ | 1 | 10 | 250 |
| 18. | Աթոռ | 1 | 4 | 10 |
| 19. | Դիֆիբրիլյատոր | 1 | 20 | 150 |
| 21. | Բժշկական գործիքներ | 50 | 20 | 50 |
| 26. | Շտապ օգնության մեքենա | 1 | 1830 | 12000 |
| 27. | Ատամնաբուժի աթոռ | 1 | 380 | 950 |
| 20,24, 28-40 | Բժշկական պարագա | 23տեղ | 141 | 260 |
| | Ընդամենը | 40տեղ | 7522 | 84954 |

Տնօրեն Ա.Հ.ԹԱՄԱԶՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 հունվարի 2013 թվականի N Մ- 002 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ «ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունվարի 24-ի N 3.1/3.8-2/747-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունվարի 24-ի N ՎՄ/3-6/728-13 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մեծ Բրիտանիայի Կյու թագավորական բուսաբանական այգիների («Royal Botanic Gardens Kew») «Հազարամյակի սերմերի պահոցի համագործակցություն» ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված բեռի՝ ասպիրատոր սարք՝ սերմեր հավաքելու համար, զգայուն կշեռք՝ սերմեր հաշվելու համար և ստերեո զում մանրադիտակ (3 տեղ, 36.7 կգ ընդհանուր քաշով, 4.148.27 անգլիական ֆունտ ստեռլինգին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, ՄՓԵԱԱՓԱՄ Մ/Տ) ներմուծման ծրագիրը: Բեռն ամբողջությամբ նվիրատվություն է Հայաստանի Հանրապետության գիտություններ ազգային ակադեմիայի «Բուսաբանության ինստիտուտի» ՊՈԱԿ-ին:

2. Հայաստանի Հանրապետության գիտություններ ազգային ակադեմիայի «Բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել դրանց օգտագործման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 հունվարի 2013 թվականի N Մ- 003 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1063-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N 1)

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 21-ի N 3/3.8-1/16835-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի դեկտեմբերի 26-ի N ՎՄ/3-4/13953-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» ավագ դպրոց» N Մ-1063-Ա (2011 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1089-Ա և 2012 թվականի նոյեմբերի 9-ի N Մ-893-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՄՁՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01514872) 2012 թվականի դեկտեմբերի 17-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է N 1 հավելվածում նշված ապրանքների մատակարարում՝ 2.046.162 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 հունվարի 2013 թվականի N Մ- 004 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1063-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 28-ի N 3.1/3.8-2/17364-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունվարի 8-ի N ՎՄ/3-6/14149-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված բեռը՝ խոհանոցային սարքավորումը (32 տեղ, 1833 կգ ընդհանուր քաշով, 23.315 եվրոին համարժեք դրամ արժողությամբ՝ փոխադրման ծախսերը կազմել են 1850 եվրո, «Արարատյան» Տ/Մ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» ավագ դպրոց» ծրագրի մասին» N Մ-1063-Ա (2011 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1089-Ա և 2012 թվականի նոյեմբերի 9-ի N Մ-893-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 հունվարի 2013 թվականի N Մ- 005 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի N Մ-362-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Այբ» կրթական հիմնադրամի 2012 թվականի դեկտեմբերի 17-ի գրությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 դեկտեմբերի 21-ի N 3/3.8-1/16833-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի դեկտեմբերի 26-ի N ՎՄ/3-4/13952-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1063-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Այբ» կրթական հիմնադրամ)» N Մ-362-Ա որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում «12.852.520 դրամ» բառերը փոխարինել «13.791.070 դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունվարի 2013 թվականի N Մ - 006 - Ա
քաղ. Երևան

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՄԱՍՆԱԿԻ ԿԱՀԱՎՈՐՄԱՆ 2-ՐԴ ՓՈՒԼ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 20 -ի N 3/3.8-1/16831-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 25-ի N 02/8043-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 24-ի N 04/07-1/15454-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի դեկտեմբերի 26-ի N ՎՄ/3-4/13948-12 ու Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 01/13.1/4986-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 1920200 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցի մասնակի կահավորման 2-րդ փուլ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2012 թվականի դեկտեմբերի 17-ին կնքված՝ N ՀՀ-Կ 11/12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող N 1 հավելվածում նշված գույքի վաճառք, տեղափոխում և դպրոցում տեղադրում՝ 1920200 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ու Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական

հիմնադրամի գործադիր տնօրեն

Արա Վարդանյան

«18» դեկտեմբերի 2012թ.

« ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցի մասնակի կահավորման 2-րդ փուլ »

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել Չարենցավան քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցի երկու դասարանները անհրաժեշտ կահույքով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Կոտայքի մարզ, Չարենցավան քաղաք, կրթության բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 1.920.200,00 դրամ: |



| | | |
|---|---|---|
| 6. | Բարեգործություն ստացողը | Չարենցավան քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցը |
| 7. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2012թ դեկտեմբերի 18-ից մինչև 2013թ. մարտի 17-ը |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԱՍՄ» ՍՊԸ-ի կողմից Չարենցավան քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցի երկու դասարանների համար ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի ցանկի համաձայն գույքի պատրաստում, գնում եւ անհատույց հանձնում՝ 1.920.200,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ՀՀ Գիտության և կրթության նախարարության հետ: |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր

տնօրենի խորհրդական

Արմինե Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 հունվարի 2013 թվականի N Մ - 007 -Ա**
**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ, ՏԱՎՈՒՇ ԵՎ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿ-ՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 24-ի N 3/3.8-1/17011-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 02/8159-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 24-ի N ՖԲ/ԱնՄ-5/9449-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի դեկտեմբերի 26-ի N ՎՄ/3-4/14020-12 և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի N 21/10.1/5608-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 3885000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան, Տավուշ և Բերդ համայնքներում խաղահրապարակների տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մագնոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05501766) 2012 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված՝ N WVA/TAV ADP/PG-13/001 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մետաղական կոնստրուկցիաներով խաղասարքերի պատրաստում և տեղադրում՝ 3885000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության

հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Գրահամ Սթրոնգի կողմից

«17-ը դեկտեմբեր, 2012թ.

«ՀՀ Տավուշի մարզի Իջևան, Տավուշ և Բերդ համայնքներում խաղահրապարակների տեղադրում»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Աջակցել Տավուշի մարզի Իջևան, Տավուշ և Բերդ համայնքներում, երեխաների համար խաղահրապարակ ձեռք բերելու և տեղադրելուն: Ծրագիրը նպատակ է հետապնդում համայնքի երեխաների համար ստեղծել զբաղմունքի վայր, որտեղ կարող են անցկացնել իրենց առօրյան: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Ծրագիրը ֆինանսավորվում է Վորլդ Վիժն ԱՄՆ-ի աջակցող գրասենյակի կողմից: Հասցե: 34834 Weyerhaeuser Way So. Federal Way, WA 98001 1-888-511-6548 www.worldvision.org |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>հասցե՝ ք. Երևան, Ռ. Մելիքյան 1 ՀՎՀՀ՝ 02528755 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրը՝ ՀՀ, Տավուշի մարզ Իջևան, Տավուշ և Բերդ համայնքներ:<br>Բնագավառը՝ սոցիալական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում 3 885 500 դրամ: Յուրաքանչյուր խաղահրապարակի արժեքը `1 295 000 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող է հանդիսանում Տավուշի մարզի Իջևան, Տավուշ և Բերդ համայնքներում: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Դեկտեմբեր-հունվար 2012-2013թթ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | (see table below) |

| Միջոցառումների նկարագրությունը | ժամկետները | անհրաժեշտ ֆինանս. միջոցներ |
|---|---|---|
| | | |
| Բաց մրցույթի անցկացում՝ ներկայացված նախագծա-նախահաշվային փաստաթղթերի հիման վրա շինարարական աշխատանքներ իրականացնող կազմակերպություն ընտրելու նպատակով | Նոյեմբեր 2012թ. | ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| Տավուշի մարզի Իջևան, Տավուշ և Բերդ համայնքներում մեկական խաղահրապարակ տեղադրման աշխատանքների իրականացում | Դեկտեմբեր-հունվար 2012-2013թթ. | 3885500 դրամ |

4/3



| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Տավուշի մարզի Իջևան, Տավուշ և Բերդ համայնքներում խաղահրապարակի տեղադրման աշխատանքները իրականացվելու <<Մազնոն>> ԲԲԸ-ի կողմից, որը ընտրվել է բաց մրցույթի արդյունքում: Խաղահրապարակը պատրաստվելու է մետաղական կոնստրուկցիայից:<br>Տավուշի մարզի Իջևան, Տավուշ և Բերդ համայնքների խաղահրապարակների կառուցման համար նախատեսված է 3 885 500 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան հասնաճյուղը այս ծրագիրն իրականացնելու է Տավուշի մարզի Իջևան, Տավուշ և Բերդ համայնքների համագործակցությամբ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև ՀՀ հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

«Վորլդ վիժն ինթերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Տավուշի տարածքային զարգացման ծրագրի ղեկավար՝

Ռ. Հակոբյան
**17.12.2012**

4/3

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 հունվարի 2013 թվականի N Մ - 008 -Ա**
**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 24-ի N 3/3.8-1/17050-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 02/8158-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 24-ի N 03/07-1/15457-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի դեկտեմբերի 26-ի N ՎՄ/3-4/13997-12 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի N 01/12.1/4312-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 4437850 դրամ ընդհանուր արժողությամբ «Համակարգիչների մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի մի շարք համայնքների դպրոցներին» ծրագիրը (կցվում է):

2. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատված է՝
«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Տնօրեն
Գրահամ Մթրոնգ
Դեկտեմբերի 21, 2012թ.

**«Համակարգիչների մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ափնա միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի, Նիգավան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի, Չքնաղ միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի, Արայի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի և Վարդենիս միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի համար»**

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Նպաստել Արագածոտն մարզի Ապարանի տարածաշրջանի Ափնա միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի, Նիգավան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի, Չքնաղ միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի, Արայի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի և Վարդենիս միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի տեխնիկական պայմանների բարելավմանը՝ մատակարարելով համակարգիչներ՝ ուսման պայմանները բարելավելու նպատակով: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | «Վորլդ Վիժն Թայվան» աջակցող գրասենյակ<br>Հասցե՝ World Vision Taiwan, 6F, 133, Sec.4, Min-Sheng East Road, Taipei 105, Taiwan (R.O.C.) |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>Հասցե՝ ք. Երևան, Ռ. Մելիքյան 1, ՀՎՀՀ 02528755 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ապարանի տարածաշրջանի Ափնա միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ը, Նիգավան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ը, Չքնաղ միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ը, Արայի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ը և Վարդենիս միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ը:<br><br>Բնագավառը՝ կրթություն |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 4 437 850 (չորս միլիոն չորս հարյուր երեսունյոթ հազար ութ հարյուր հիսուն) դրամ: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ապարանի տարածաշրջանի Ափնա միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ը, Նիգավան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ը, Չքնաղ միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ը, Արայի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ը և Վարդենիս միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ը: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | դեկտեմբերի 21 2012 թ. – փետրվարի 28, 2013թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակներում, սույն թվականի դեկտեմբեր և 2013թ. փետրվար ամիսներին կմատակարարվեն համակարգիչներ Ապարանի տարածաշրջանի Ափնա միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի (7 հատ), Նիգավան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի (7 հատ), Չքնաղ միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի (3 հատ), Արայի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի (3 հատ) և Վարդենիս միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի (3 հատ) տեխնիկական պայմանների բարելավման համար:<br>Մատակարարվող համակարգիչների ընդհանուր արժեքը կազմում է 4 437 850 (չորս միլիոն չորս հարյուր երեսունյոթ հազար ութ հարյուր հիսուն) դրամ: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Համակարգիչների մատակարարումն իրականացնելու նպատակով մրցութային կարգով ընտրվել և պայմանագիր է կնքվել "Կոմպասս" ՍՊԸ-ի հետ՝ 4 437 850 (չորս միլիոն չորս հարյուր երեսունյոթ հազար ութ հարյուր հիսուն) դրամ ընդհանուր արժողությամբ:<br>Մատակարար կազմակերպության հետ կնքված պայմանագրի պատճեն և համապատասխան հավելվածները կցվում են:<br>Ապարանի տարածաշրջանի Ափնա միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ը (7 հատ), Նիգավան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ը (7 հատ), Չքնաղ միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ը (3 հատ), Արայի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ը (3 հատ) և Վարդենիս միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ը (3 հատ): |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված նախատեսվող ծախսեր | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական և այլ մարմինների հետ | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը այս ծրագիրն իրականացնելու է տեղական իշխանության կառույցների / Ապարանի տարածաշրջանի Ափնա միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի, Նիգավան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի, Չքնաղ միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի, Արայի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի և Վարդենիս միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի հետ համատեղ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի վերահսկողությունը կիրականացվի ծրագրի ֆինանսավորող Վորլդ Վիժն Թայվանի կողմից, ինչպես նաև «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» հայաստանյան մասնաճյուղի Շինարարական Ծրագրերի պատասխանատուի և Տարածքային զարգացման համակարգողների կողմից, որոնք իրենց հերթին վերահսկվում են միջազգային աուդիտի և ՀՀ հարկային մարմինների կողմից:<br><br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

Արման Գրիգորյան

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Ապարանի տարածքային զարգացման ծրագրի ղեկավար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 հունվարի 2013 թվականի N Մ - 009 -Ա**
**քաղ. Երևան**

### «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲԺՇԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԲԱՇԽՈՒՄ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 28-ի N 3/3.8-1/17361-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 28-ի N 02/8195-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 28-ի N ԴԴ/22/13273-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի N ՎՄ/3-6/14086 -12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 1850000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Բժշկական պարագաների ներմուծում և անհատույց բաշխում առողջապահական հաստատություններին» ծրագիրը (կցվում է):

2. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի, Շիրակի, Տավուշի, Սյունիքի, Լոռու մարզպետներին և Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի
տնօրեն Գրահամ Սթրոնգ

«………»………………………..2012թ

Բժշկական պարագաների ներմուծում և անհատույց բաշխում առողջապահական հաստատություններին

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Բժշկական պարագաների ներմուծում և անհատույց բաշխում առողջապահական հաստատություններին, որոնք համագործակցում են Վորլդ Վիժն կազմակերպության հետ՝ սպասարկելով կարիքավոր բնակչությանը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | Բարեգործական օգնությունը տրամադրվում է Վորլդ Վիժն ԱՄՆ-ի (34834 Վեյերհաուսեր վեյ 5, ֆեդերալ վեյ, ՎԱ 98001, ԱՄՆ), Կանադայի (1 Վորլդ դրիվե, Միսսիսագվա, Օնտարիո), և Ավստրալիայի (1 Վիժն դրայվ, Բարվուդ իստ, Ավստրալիա 3151) աջակցող գրասենյակների կողմից: |
| 4 | Ծրագրի կատարողը | Ծրագրի իրականացնող է հանդիսանում «Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը (հասցե՝ Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755): |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է Երևանում, Շիրակի, Տավուշի, Գեղարքունիքի, Լոռու, Սյունիքի մարզերում: Ծրագրի իրականացման բնագավառն է առողջապահական: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 1850000 ԱՄՆ դոլար: Բարեգործական օգնությունը տրամադրվում է Վորլդ Վիժն ԱՄՆ-ի – 750000 ԱՄՆ դոլար, Կանադայի – 900000 ԱՄՆ դոլար, Ավստրալիայի – 150000 ԱՄՆ դոլար, գրասենյակների կողմից, պահեստի վարձակալման ծախսերը՝ 50000 ԱՄՆ դոլար: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառուներն են վերը նշված տարածաշրջանների այն առողջապահական հաստատությունները, որոնք համագործակցում են Վորլդ Վիժն կազմակերպության հետ՝ սպասարկելով կարիքավոր բնակչությանը:<br>**Բժշկական հաստատությունները.**<br>**Երևան**՝ Ս.Աստվածամայր բժշկական կենտրոն, Արաբկիր բժշկական համալիր, Բժշկական գենետիկայի և առողջության առաջնային պահպանման կենտրոն, Ս. Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն, Քանաքեռ-Զեյթուն բժշկական կենտրոն, "Արմենիա" հանրապետական բժշկական կենտրոն, Էրեբունի բժշկական կենտրոն.<br>**Սիսիան և Գորիս**՝ Անգեղակոթի բժշկական կենտրոն, Գորայքի առողջության առաջնային պահպանման կենտրոն, Դարբասի առողջության առաջնային պահպանման կենտրոն, Սիսիանի բժշկական կենտրոն, Բռնակոթի առողջության առաջնային պահպանման կենտրոն, Գորիսի բժշկական կենտրոն, Վերիշենի բժշկական կենտրոն, Տեղի առողջության առաջնային պահպանման կենտրոն, Շինուհայրի առողջության առաջնային պահպանման կենտրոն:<br>**Մեղրի**՝ Մեղրիի տարածաշրջանային բժշկական կենտրոն, Լեհվազի գյուղական բժշկական ամբուլատորիա, Շվանիձորի գյուղական բժշկական ամբուլատորիա, Լիչքի գյուղական բժշկական ամբուլատորիա:<br>**Տավուշ**՝ Իջևան առողջության առաջնային պահպանման կենտրոն, Սևքար ամբուլատորիա, Ազատամուտ առողջության առաջնային պահպանման կենտրոն, Աչաջուր առողջության կենտրոն, Այգեհովիտ առողջության առաջնային պահպանման կենտրոն, Խաշթառակ առողջության առաջնային պահպանման կենտրոն, Գետահովիտ առողջության առաջնային պահպանման կենտրոն, Բերդ բժշկական կենտրոն, Արծվաբերդ առողջության կենտրոն, Ն.Կ.Աղբյուր առողջության առաջնային պահպանման կենտրոն, Պառավաքար ամբուլատորիա, Նավուր առողջության առաջնային պահպանման կենտրոն, Նոյեմբերյան բժշկական կենտրոն:<br>**Ալավերդի**՝ Արևածագի առողջության առաջնային պահպանման կենտրոն, Ճոճկանի |

| | | |
|---|---|---|
| | | բժշկական ամբուլատորիա, Արքրու առողջության առաջնային պահպանման կենտրոն, Թումանյանի առողջության կենտրոն, Ախթալայի առողջության կենտրոն: Գյումրի՝ Ավստրիական մանկական հիվանդանոց, Կարմիր Խաչի պոլիկլինիկա, Ախուրյանի մոր և մանկան կենտրոն: Կապան՝ Կապանի հիվանդանոց, Կապանի հոգեբուժարան: Գեղարքունիք՝ Վարդենիսի հիվանդանոց, Վարդենիսի պոլիկլինիկա, Ճամբարակի հիվանդանոց, Ճամբարակի պոլիկլինիկա |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 2013 թ. հունվարի 1-ից մինչև 2015 թ. դեկտեմբերի 31-ը: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ներկա պահին անհնար է ներկայացնել շահառուների կոնկրետ ցուցակ, քանի որ ստացված բեռի պարունակության ու քանակի մասին ճշգրիտ տեղեկությունները պարզվում են բեռի ստացման պահին: 2013-2015 թ.-ի ընթացքում ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 1850000 ԱՄՆ դոլար արժողությամբ բուժ. պարագաների բաշխում: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Բեռի յուրաքանչյուր խմբաքանակի ներմուծման համար առանձին հայտ է ներկայացվում ՀՀ բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին՝ որին կցվում է ստացվող բեռի պարունակության և բաշխման ցանկի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ: Անհրաժեշտության դեպքում կատարվում է սերտիֆիկացում համապատասխան պետական մարմինների կողմից: Նախատեսվում է բեռների ներմուծում 1850000 ԱՄՆ դոլար արժողությամբ: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը ներառում են պահեստի վարձակալման ծախսերը՝ 50000 ԱՄՆ դոլար: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի, առողջապահության նախարարության, Շիրակի, Տավուշի, Սյունիքի, Լոռու, Գեղարքունիքի, Արագածոտնի մարզպետարանների առողջապահության վարչությունների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագիրը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև հարկային մարմինների կողմից: Հումանիտար օգնություն ստացած շահառուների վերջնական ցուցակները տրամադրվելու են սոցիալական ծառայություններին և այլ շահագրգիռ մարմիններին: Սահմանված կարգով հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության

հայաստանյան մասնաճյուղի ծրագրերի ղեկավար

Շաղիկ Մարուխյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 հունվարի 2013 թվականի N Մ - 010 -Ա**
**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԲԱՇԽՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 28-ի N 3/3.8-2/17360-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 28-ի N 02/8193-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N ՖԲ/ԱնՄ-5/9606-12 և Հայաստանի Հանրապետության կառավարու-թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի N ՎՍ/3-6/14100 -12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 11250000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում» ծրագիրը (կցվում է):

2. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-թյուն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությու, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի, Սյունիքի, Տավուշի մարզպետներին ու Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի
տնօրեն Գրահամ Սթրոնգ
«........»..............2012 թ

**Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում**

**Ծ Ր Ա Գ Ի Ր**

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է օգնություն ցույց տալ Հայաստանի տարածաշրջանների համայնքներում բնակվող խոցելի խմբերին՝ հաշմանդամներին, ծնողազուրկ երեխաներին, գործազուրկներին, զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին և սոցիալական ծանր պայմաններում գտնվող այլ ընտանիքներին, բարեգործական օգնության (հագուստ և կոշիկ /բոլորը նոր/, գրենական պիտույքներ և խաղալիքներ, շինանյութեր, կահույք և կենցաղային պարագաներ, մարզական պարագաներ, հիգիենիկ պարագաներ և այլն) բաշխման միջոցով: |
| 2 | Ծրագրի բարեգործական ոակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | Բարեգործական օգնությունը տրամադրվում է Վորլդ Վիժն ԱՄՆ-ի (34834 Վեյերհաուսեր վեյ 5, ֆեդերալ վեյ, ՎԱ 98001, ԱՄՆ), Կանադայի (1 Վորլդ դրիվէ, Միսսիսագվա, Օնտարիո), և Ավստրալիայի (1 Վիժն դրայվ, Բարվուդ իստ, Ավստրալիա 3151) աջակցող գրասենյակների կողմից: |
| 4 | Ծրագիրը կատարողը | Ծրագրի իրականացնող է հանդիսանում «Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը (հասցե՝ Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755):<br>Ծրագրերն իրականացվում են տեղական ինքնակառավարման մարմինների ու համայնքային նախաձեռնող խմբերի օգնությամբ և համայնքների անդամների մասնակցությամբ: |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մարդասիրական բեռներով ստացված ապրանքները հիմնականում բաժանվելու են տարածաշրջաններում ընդգրկված հետևյալ համայնքների երեխաներին, կարիքավոր բնակիչներին, կրթական հաստատություններին.<br>Երևանում՝ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան.<br>Ալավերդու տարածաշրջան՝ Ալավերդի, Արևածագ, Մղարթ, Աքորի, Կաճաճկուտ, Այրում, Ճոճկան, Հաղպատ, Քարինջ, Ջիլիզա, Ախթալա համայնքներում. |

| | | |
|---|---|---|
| | | **Ապարանի տարածաշրջան**՝ Ապարան, Արագած, Ձորագլուխ, Հարթավան, Լուսագյուղ, Քուչակ, Շենավան, Շողակն, Նորաշեն, Վարդենիս, Եղիպատրուշ, Երնջաքափ.<br>**Գավառի տարածաշրջան**՝ Գավառ, Լճափ, Լանջաղբյուր, Գեղարքունիք, Հայրավանք, Ծաղկաշեն, Բերդկունք, Ծովազարդ, Գանձակ, Սարուխան.<br>**Գյումրի քաղաքի** Անի, Մուշ, Շերամ և <Ավստրիական գյուղ> թաղամասերը, ինչպես նաև Մարմաշեն և Հովունի գյուղերում.<br>**Կապանի տարածաշրջան**՝ Կապան, Շղարշիկ, Բարաբաթում, Բաղաբուրջ, Կավարտ, Բեխ, Վաչագան, Աշոտավան, Երկաթուղայինների, Սարահարթ, Բաղաբերդ,Հալիձոր, Բաղաբերդ 1, Ձորք, Վահանավանք, Ագարակ, Անտառաշատ, Աղվանի, Արծվանիկ, Գեղանուշ, Գեղի, Դավիթ-Բեկ, Եղեգ, Ծավ/Շիշկերտ, Ներքին Խոտանան, Շիկահող, Սրաշեն, Սյունիք, Տանձավեր, Օխտար, Եղվարդ, ինչպես Անդոկ /Արամ Մանուկյան/ և Մուշեղ Հարությունյան համատիրություններում.<br>**Սիսիանի և Գորիսի Տարածաշրջան**՝ Սիսինշան, Գորիս, Բալաք, Դարբաս, Շամբ, Գորայք, Անգեղակոթ, Իշխանասար, Աղիտու, Սալվարդ, Սառնակունք, Լոր, Լծեն, Շաղատ, Շաքե, Գետաթաղ, Մուծք, Աշոտավան, Տոլորս, Բռնակոտ, Քարահունջ, Հալիձոր, Հարժիս, Խոտ, Շինուհայր.<br>**Ստեփանավանի տարածաշրջան**՝ Ստափանավան, Միխայլովկա, Լեռնահովիտ, Պրիվոլնոյե, Սվերդլով, Ուռուտ, Ագարակ, Յաղդան, Կուրթան, Վարդաբլուր, Հոբարձի, Սարչապետ, Նորաշեն, Բլագոդարնոյե, Գյուլագարակ, Գարգառ, Կողես, Պուշկինո, Լոռի բերդ, Ամրակից, Լեջան.<br>**Թալինի տարածաշրջան**՝ Թալին, Ագարակ, Արեգ, Ակունք, Աշնակ, Ներքին Բազմաբերդ, Վերին Բազմաբերդ, Արտենի, Նոր Արթիկ, Ներքին Սասնաշեն, Վերին Սասնաշեն, Դավթաշեն, Կաքավաձոր, Կաթնաղբյուր, Իրինդ, Եղնիկ, Դաշտադեմ, Հացաշեն, Ցամաքասար, Զարինջա, Սուսեր, Մաստարա, Կարմրաշեն, Ոսկեթաս, Զովասար, Գառնահովիտ.<br>**Տավուշի տարածաշրջան**՝ Իջևան, Գետահովիտ, Խաշտառակ, Լուսաձոր, Դիտավան, Ազատամուտ, Այգեհովիտ, Աչաջուր, Սևքար, Սարիգյուղ, Բերդ, Պառավաքար, Արծվաբերդ, Տավուշ, Ն.Կ.Աղբյուր, Նավուր, Նորաշեն, Ոսկևան, Բաղանիս, Կոթի.<br>**Վարդենիսի տարածաշրջան**՝ Վարդենիս, Ավազան, Գեղամասար, Արեգունի, Դարանակ, Նորաբակ, Շատվան, Ջաղացաձոր, Գեղամաբակ, Շատջրեք, Այրք, Ազատ, Կութ, Սոթք, Տրետուք, Կուտական, Կախակն, Արփունք, Փամբակ, Ծափաթաղ, Ջիլ, Վաննան, Տորֆավան, Արտանիշ, Ակունք, Կարճաղբյուր, Լճավան, Լուսակունք, Մաքենիս, Մեծ Մասրիկ, Փոքր Մասրիկ, Նորակերտ և Ծովակ.<br>**Ճամբարակի տարածաշրջան**՝ Ճամբարակ, Աղբերք, Շորժա, Դրախտիկ, Մարտունի, Ծովագյուղ.<br>**Ամասիայի տարածաշրջան**՝ Ամասիա, Արեգնադեմ, Գտաշեն, Գյուլիբուլաղ, Վողջի, Մեղրաշատ, Ջրաձոր, Հողմիկ, Բանդիվան, Գառնառիչ, Բերդաշեն, Աշոծք, Բավրա, Սիզավետ, Տավշուտ, Ղազանչի, Մեծ Սեպասար, Փոքր Սեպասար, Կրասար, Կարմրավան, |

| | | |
|---|---|---|
| | | Մուսաեյան, Վարդաղբյուր, Սալուտ, Յողամարգ, Թորոս, Լեռնագյուղ, Գոգհովիտ, Արփենի, Ջույգաղբյուր, Ախուրյան, Հայկավան, Քետի, Հացիկ, Կարմրաքար.<br>Ծրագրի իրականացման բնագավառը սոցիալական. |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 11250000 ԱՄՆ դոլար, որը բաշխվում է հետևյալ մոտավոր արժեքներով՝ ՎՎ ԱՄՆ – 7800000 ԱՄՆ դոլար, ՎՎ Կանադա – 2700000 ԱՄՆ դոլար, ՎՎ Ավստրալիա – 600000 ԱՄՆ դոլար, տրանսպորտային ծախսերը Հայաստանի տարածքում կազմում են 150000 ԱՄՆ դոլար: |
| 7 | Բարեգործության ստացողը | Ծրագրի շահառուների ընդհանուր թիվը կազմում է 317000 մարդ, այդ թվում 42000 երեխա:<br>«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի տարածքային զարգացման ծրագիրը տարածաշրջանի համայնքներում իրականացրել է հիմնական կարիքների ուսումնասիրություն: Դրա արդյունքում ծրագրում ընդգրկվել են 343 համայնքներ, որոնք ներկայացված են ծրագրի 5-րդ բաժնում: Մնացած շահառուների ընտրությունը կատարվելու է տարածաշրջանի սոցիալական ծառայության, ծրագրի մոնիտորների և համայնքային ակտիվ խմբերի միջոցով՝ կազմակերպությունում մշակված ընտանիքների կարիքների գնահատման հարցաթերթիկի հիման վրա: Սոցիալապես անապահով քաղաքացիներին բարեգործական օգնություն է տրվելու նաև տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի հիման վրա:<br>Բացի այդ, անհրաժեշտության դեպքում ապրանքներ են բաժանվելու նաև տարածքային ծրագրում չընդգրկված այլ համայնքների կարիքավոր ընտանիքներին, երեխաներին, կրթական ու առողջապահական հաստատություններին, կազմակերպության հետ համագործակցող հասարակական կազմակերպություններին:<br>Ներկա պահին անհնար է ներկայացնել շահառուների կոնկրետ ցուցակ, քանի որ ստացված բեռի պարունակության ու քանակի մասին ճշգրիտ տեղեկությունները պարզվում են բեռի ստացման պահին: Միևնույն ժամանակ բեռի յուրաքանչյուր խմբաքանակի ներմուծման համար առանձին հայտ է ներկայացվում ՀՀ բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին՝ որին կցվում են ստացվող բեռի պարունակության և բաշխման ցանկի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 2013 թ. Հունվարի 1 ից մինչև 2015 թ. դեկտեմբերի 31-ը: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2013 - 15թ.-ի ընթացքում ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 11250000 ԱՄՆ դոլարի արժողությամբ բարեգործական օգնության բաշխում, որի չափերն ըստ համայնքների պլանավորվել է շահառուների քանակին համապատասխան:<br>Բարեգործական օգնության բաշխումը հիմնականում կատարվելու է Նոր տարվա ու Սուրբ ծննդի, զատիկի տոների կապակցությամբ, ամառային ճամբարի ժամանակ, երեխաների պաշտպանության օրը, ուսումնական տարվա սկզբին ինչպես նաև ըստ ծագած անհրաժեշտության: |

| | | |
|---|---|---|
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Մարդասիրական բեռների ընդհանուր արժեքը կազմում է մոտավորապես 11250000 ԱՄՆ դոլար, որից հագուստ՝ 2650000 ԱՄՆ դոլար, կոշիկ 2850000 ԱՄՆ դոլար, դպրոցական պարագաներ և խաղալիքներ՝ 1950000 ԱՄՆ դոլար, շինանյութ՝ 1500000 ԱՄՆ դոլար, կահույք և կենցաղային պարագաներ՝ 1200000 ԱՄՆ դոլար, մարզական պարագաներ՝ 450000 ԱՄՆ դոլար, հիգիենիկ պարագաներ՝ 650000 ԱՄՆ դոլար, այդ թվում տրանսպորտային ծախսերը Հայաստանի տարածքում նախատեսվում է, որ չեն գերազանցի 150000 ԱՄՆ դոլարը:<br>Բեռների տեղափոխումն իրականացնելու նպատակով ՀՀ տարածքում տրանսպորտային ծառայություն մատուցող որևէ կազմակերպության կամ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ հետ կնքվելու է ծառայությունների մատուցման պայմանագիր:<br>Ապրանքները շահառուներին բաժանվելու են «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից՝ համայնքային ակտիվ /նախաձեռնող/ խմբերի և համայնքի ղեկավարների միջոցով: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը ներառում են Հայաստանի տարածքում տրանսպորտային ծախսեր, որը կկազմի 150 000 ԱՄՆ դոլար; |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Տարածքային Զարգացման Ծրագիրը իրականացնելու ընթացքում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է տարածաշրջանում գտնվող պետական և տեղական ինքնակառավարման և այլ շահագրգիռ մարմինների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի ինչպես նաև հարկային մարմինների կողմից:<br>Հումանիտար օգնություն ստացած շահառուների վերջնական ցուցակները տրամադրվելու են սոցիալական ծառայություններին և այլ շահագրգիռ մարմիններին: Սահմանված կարգով հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողով: |

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի ծրագրերի ղեկավար

Շաղիկ Մարուխյան

9/17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 հունվարի 2013 թվականի N Մ - 011 -Ա**
**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՇԻՆԱՆՅՈՒԹԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունվարի 24-ի N 3/3.8-1/756-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի հունվարի 25-ի N 02/385-13, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի հունվարի 25-ի N 04/07-1/669-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունվարի 25-ի N ՎՄ/3-4/789-13 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2013 թվականի հունվարի 25-ի N 01/14.2/204-13 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 3529775 դրամ ընդհանուր արժողությամբ «Շինանյութի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Վարդենուտ համայնքի միջնակարգ դպրոցին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ապար-777» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01807983) 2013 թվականի հունվարի 21-ին կնքված՝ N WVA/APAR ADP/HT-13/001 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Վարդենուտ համայնքի միջնակարգ դպրոցի ջեռուցման համակարգի մատակարարում և տեղադրում 3529775 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատված է՝
«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
տնօրեն
Գրահամ Սթրոնգ
Հունվարի 21, 2013թ.

# «Շինանյութի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Վարդենուտ համայնքի միջնակարգ դպրոցին»

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Բարելավել Ապարանի տարածաշրջանի Վարդենուտ համայնքի միջնակարգ դպրոցի ենթակառուցվածքների վիճակը: |
| 2 | Ծրագրի բարեգործական ուղղվածության նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | «Վորլդ Վիժն Թայվան» աջակցող գրասենյակ<br>Հասցե՝ World Vision Taiwan, 6F, 133, Sec.4, Min-Sheng East Road, Taipei 105, Taiwan (R.O.C.) |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>Հասցե՝ ք. Երևան, Ռ. Մելիքյան 1, ՀՎՀՀ 02528755 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Արագածոտնի մարզի Վարդենուտ համայնքում:<br>Բնագավառը՝ կրթական |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 3 529 775 (երեք միլիոն հինգ հարյուր քսանինը հազար յոթ հարյուր յոթանասունհինգ) դրամ: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Արագածոտն մարզի Վարդենուտ համայնքի միջնակարգ դպրոցը: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Հունվարի 25 – Մարտի 15, 2013թ. |

1/3

9 — Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը

Ծրագրի շրջանակներում, սույն թվականի Հունվար – Մարտ ամիսներին մատակարարվելու է շինանյութ ստորև ներկայացված աղյուսակին համապատասխան.

| N | Ծրագրերի անվանումը | Ժամկետները | Անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը |
|---|---|---|---|
| 1. | Շինանյութի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Վարդենուտ համայնքի միջնակարգ դպրոցի ջեռուցման համակարգի անցկացման համար: | Հունվար – Մարտ, 2013թ. | 3 529 775 |
| 2. | Ընդամենը: | | 3 529 775 |

10 — Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը

| N | Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը | Ձեռք բերվող ծավալները | Նախատեսվող գինը |
|---|---|---|---|
| 1. | Շինանյութի մատակարարում՝ Երկկոնտուրանի տուրբո կաթսա 18 կՎտ, Միակոնտուր տուրբո կաթսա 32 կՎտ, Ծխատար, Մարտկոց, Փական, Հետադարձ գծի փական, Կարգավորվող մեխանիկական փական, Անցում, Անկյուն, Ֆիլտր, Եռակողմ, Նիպել, Գազի խողովակ, Օդահան Միլիկոն, Խծուծ, Խողովակի ամրացում, Պտուտակ դյուպել 22 Արագածոտն մարզի Վարդենուտ համայնքի միջնակարգ դպրոցի ջեռուցման համակարգի անցկացման աշխատանքները իրականացնելու համար: | Վերանորոգման նախահաշիվ՝ Հավելված 1 | 3 529 775 |
| 2. | Ընդամենը: | | 3 529 775 |

Մատակարարումն իրականացնող կազմակերպության՝ "Ազաթ-777" ՍՊԸ-ի հետ կնքվել է համապատասխան պայմանագիր: Շինանյութի մատակարարումը կիրականցվի կազմակերպության հետ կնքված շինարարական նյութերի մատակարարման պայմանագրին համապատասխան 3 529 775 (երեք միլիոն հինգ հարյուր քսանինը հազար յոթ հարյուր յոթանասունհինգ) դրամ արժողությամբ:

| | | |
|---|---|---|
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված նախատեսվող ծախսեր | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| 12 | Համագործակցությունը տեղական ինքնակառավարման, տեղական այլ մարմինների հետ | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը այս ծրագիրն իրականացնելու է Վարդենուտ համայնքի միջնակարգ դպրոցի հետ համատեղ: |

1/3

| | | |
|---|---|---|
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի Վերահսկողությունը կիրականացվի ծրագրի ֆինանսավորող Վորլդ Վիժն Թայվանի կողմից, ինչպես նաև «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» հայաստանյան մասնաճյուղի Շինարարական Ծրագրերի պատասխանատուի և Տարածքային Զարգացման Համակարգողների կողմից, որոնք իրենց հերթին վերահսկվում են միջազգային աուդիտի և ՀՀ հարկային մարմինների կողմից:<br><br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

Արման Գրիգորյան

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Ապա[illegible]ային զարգացման ծրագրի ղեկավար

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
ARMENIAN DIVISION
02528755

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**25 հունվարի 2013 թվականի N Մ- 012 -Ա**
**քաղ. Երևան**

«ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունվարի 15-ի N 3/3.8-2/265-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի հունվարի 11-ի N ՖՐ/ԱնՄ-5/95-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունվարի 17-ի N ՎՄ/3-6/504-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված խառը բեռի (1122 տեղ, 5029 կգ քաշով, 226167 ԱՄՆ-ի դոլար արժեքով, որից բեռնափոխադրման ծախսերը կազմում են 7360 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն, բեռի և բաշխման ցանկերը կցվում են) ներմուծման և բաշխման ծրագիրը:
2. «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:
3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հումանիտար օգնություն Հայաստանի ժողովրդին

ՑԱՆԿ

| Քանակ | Միավոր | Նկարագիր | Արժեք | Քաշ /ֆունտ/ |
|---|---|---|---|---|
| 12 | հատ | Մանկական հագուստ և կոշիկ | $ 1,200.00 | 30 |
| 8 | հատ | Մանկական և մեծահասակի կոշիկ | $ 3,232.00 | 25 |
| 1 | հատ | Տակդիր | $ 120.00 | 24 |
| 4 | հատ | Ուսուցանող խաղալիքներ և արվեստի պարագաներ | $ 80.00 | 28 |
| 5 | հատ | Պանտին շամպունի հավաքածու/ Հիգիենիկ պարագաներ | $ 1,000.00 | 30 |
| 20 | հատ | Գրքեր | $ 250.00 | 35 |
| 1 | հատ | Արջավի մեծ վրանի հավաքածու | $ 150.00 | 50 |
| 1 | հատ | Մանկական հեծանիվ սաղավարտով | $ 150.00 | 30 |
| 2 | հատ | Մեքենայի մանկական նստատեղ | $ 250.00 | 25 |
| 1 | հատ | Օրորոցային հավաքածու | $ 250.00 | 60 |
| 2 | հատ | Արդուկի սեղան | $ 400.00 | 35 |
| 1 | հատ | Քայլակ | $ 150.00 | 15 |
| 1 | հատ | Բակային անձրևանոց | $ 375.00 | 30 |
| 2 | հատ | Հեռուստացույցի պատի տակդիր | $ 150.00 | 28 |
| 1 | հատ | Խոհանոցի սպասք | $ 125.00 | 25 |
| 2 | հատ | Ջրի շիշ | $ 50.00 | 20 |
| 1 | հատ | Մանկական պարագաներ/ տարբեր | $ 75.00 | 13 |
| 2 | հատ | Գործված շարֆեր, գլխարկներ, ձեռնոցներ | $ 105.00 | 15 |

1/9.4

| | | | | |
|---|---|---|---|---|
| 20 | հատ | PC միավորներ | $ 10,000.00 | 25 |
| 12 | հատ | Մոնիտորներ | $ 240.00 | 20 |
| 4 | հատ | Տպիչներ | $ 800.00 | 20 |
| 10 | հատ | Ստեղնաշարեր | $ 10.00 | 5 |
| 5 | հատ | Մկնիկներ | $ 5.00 | 2 |
| 1 | հատ | Ակուստիկ համակարգ | $ 50.00 | 15 |
| 10 | հատ | Տարբեր լարեր և կաբելներ | $ 100.00 | 20 |
| 1 | հատ | Մատիտի էլեկտրական սրիչ | $ 15.00 | 2 |
| 1 | հատ | Քերրի Ռովերի շրջանակ /տարրական/ | $ 2,000.00 | 45 |
| 1 | հատ | Քերրի նստատեղ /տարրական/ | $ 1,000.00 | 34 |
| 1 | հատ | Քերրի նստատեղ /մանկական/ | $ 1,000.00 | 39 |
| 3 | հատ | Կերակրելու նստատեղ | $ 2,400.00 | 45 |
| 3 | հատ | Հատակի նստատեղ | $ 2,400.00 | 30 |
| 983 | հատ | Հագուստ, վերնաշապիկ բոլոր չափերի | $ 198,040.00 | 10.268 |
| | | | | |
| 1122 | Ընդհանուր փոխադրվող կտորներ | | $ 226,167.00 | 11088 |

կամ 5029 կգ

1/9.4

| Անվանում | ՀՀ ՄՍՀՆ Գավառի մանկատուն ՊՈԱԿ | ՀՀ ՄՍՀՆ Խարբերդի մասնագիտացված մանկատուն ՊՈԱԿ | Գյումրու Ֆ. Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն ՊՈԱԿ | Սեր տուն ՀԿ | Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի [illegible] | ՀՀ ՄՍՀՆ "Երևանի մանկան տուն" ՊՈԱԿ | Տիրամայր Հայաստանի [illegible] ՀԿ | Մայր Թերեզայի [illegible] ՀԿ | ՀՀ ՄՍՀՆ Երևանի Զատիկ երեխաների աջակցության կենտրոն ՊՈԱԿ | Զ. [illegible] #20 [illegible] | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ՀԲԸՄ [illegible] | ՀՀ ՄՍՀՆ Գյումրու [illegible] ՊՈԱԿ | Ընդհանուր [illegible] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Երեխաների հագուստ/կոշիկ | | 2 | | | | 2 | 8 | | | | | | 12 |
| Երեխաների, մեծահասակների կոշիկ | | 2 | | | | | 4 | | | | 2 | | 8 |
| Տակդիր | | | | | | | | 1 | | | | | 1 |
| Ուսուց. խաղալիքներ/արվ. պարագ | | | | | | 1 | 2 | | | | 1 | | 4 |
| Շամպուն հիգիենիկ | | 2 | | | | | | 2 | | | 1 | | 5 |
| Գրքեր | 10 | | | 5 | 5 | | | | | | | | 20 |
| Արշավի վրանի հավաքածու | | | | | | | | | | | 1 | | 1 |
| Մանկական հեծանիվ սաղավարտով | | | | | | | | | | | 1 | | 1 |
| Մեքենայի մանկական նստատեղ | | | | | | | | 2 | | | | | 2 |
| Օրորոցային հավաքածու | | | | | | | | 1 | | | | | 1 |
| Արդուկի սեղան | | | | | | | | | | | 2 | | 2 |
| Քայլակ | | 1 | | | | | | | | | | | 1 |
| Բակային անձրևանոց | | | | | | | | | | | 1 | | 1 |
| Հեռուստ. պատի տակդիր | | | | | | | | | | | 2 | | 2 |
| Խոհանոցային սպասք | | | | | | | | | | | 1 | | 1 |
| Ջրի շիշ | | | | | | | 1 | | | | 1 | | 2 |
| Մանկական պարագաներ/ տարբեր | | | | | | | | 1 | | | | | 1 |
| Տրիկոտաժե հագուստ | | | | | | 2 | | | | | | | 2 |
| PC միավորներ | | | 10 | | | | | | | | 10 | | 20 |
| Մոնիտորներ | | | 6 | | | | | | | | 6 | | 12 |
| Տպիչներ | | | 2 | | | | | | | | 2 | | 4 |
| Ստեղնաշարեր | | | 5 | | | | | | | | 5 | | 10 |
| Մկնիկներ | | | 3 | | | | | | | | 2 | | 5 |
| Ակուստիկ համակարգ | 1 | | | | | | | | | | | | 1 |
| Տարբեր լարեր և կաբելներ | | | 2 | | | | | | | | 8 | | 10 |
| Մատիտի էլեկտ. սրիչ | 1 | | | | | | | | | | | | 1 |
| Հագուստ, վերնաշապիկ | 100 | 150 | 100 | 100 | 50 | 0 | 83 | 0 | 100 | 100 | 100 | 100 | 983 |
| Ֆիզիոթերապիայի սարքեր | | | | | | | | 9 | | | | | 9 |
| | | | | | | | | | | | | | |
| **Վերջնական ընդհանուր** | **112** | **157** | **128** | **105** | **55** | **5** | **98** | **16** | **100** | **100** | **146** | **100** | **1122** |

Հագուստ, վերնաշապիկ/ ֆլանելի վերնաշապիկ
Չափս A
Չափս B
Չափս C
Չափս F

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 հունվարի 2013 թվականի N Մ - 013 - Ա**

**քաղ. Երևան**

## «ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱ-ԴՐԱՄ»-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունվարի 21-ի N 3/3.8-2/528-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի հունվարի 21-ի N ՖԲ/ԱնՄ-5/252-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունվարի 21-ի N ՎՄ/3-6/558-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի հասցեով ստացված ջոր ապուրի (21 տեղ, 15422 կգ ընդհանուր քաշով, 132000 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 9400 ԱՄՆ-ի դոլար, բեռի բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը:

2. «Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Գ. Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» անունով ուղարկված 21 պալետ, 132 000 ԱՄՆ դոլար արժողությամբ,
ճանապարհածախսը՝ 9 400 ԱՄՆ դոլար արժողությամբ բեռի
ԲԱՇԽՄԱՆ Ց Ա Ն Կ Ը

| h/h | Ապրանքի անվանումը | Տեղ | Քաշ բրուտտո կգ | Արժեք $ | ԼՂՀ Քաշաթաղի շրջ.սոցապ վարչություն | ԼՂՀ «Արփեն» մայր և նորածին կենտրոն ԲԿ | ՀՀ սոցապ նախարարություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | վիտամինացված սնունդ/ջոր ապուր/ | 21 պալետ | 15 422 | 132 000 | 5140 | 9973 | 309 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**25 հունվարի 2012 թվականի N Մ- 014 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 1**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 21-ի N 3/3.8-2/16836-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N ԴԴ/22/12790-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի N ՎՄ/3-6/13750-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Բելգիայի ՆԱՖ ասոցիացիայի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բժշկական սարքը (լաբորատոր ախտորոշիչ հավաքածու՝ իր բաղադրիչներով) (1 տեղ, 4.8 կգ ընդհանուր քաշով, 2066.44 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 75 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓԵւՍԱՓԱՄ» մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա (2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1025-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 հունվարի 2013 թվականի N Մ- 015 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 2

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունվարի 11-ի N 3/3.8-2/121-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի հունվարի 9-ի N ԴԴ/22/16-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունվարի 8-ի N ՎՄ/3-6/14151-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Շվեյցարիայի ՍԵՄՌԱ Պլյուս հիմնադրամի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված կալցիում ացետատը (2 տեղ, 54 կգ ընդհանուր քաշով, 2 շվեյցարական ֆրանկ արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 432 շվեյցարական ֆրանկ, «ՄՓԵւՄԱՓԱՄ» մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա (2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1025-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**25 հունվարի 2013 թվականի N Մ- 016 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N3**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունվարի 17-ի N 3/3.8-2/384-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի հունվարի 16-ի N ԴԴ/22/271-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունվարի 16-ի N ՎՄ/3-6/353-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի «Բժշկական ծառայություններ երեխաների համար» հասարակական կազմակերպության կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված վիդեոկոնֆերանսի համակարգը (2 տեղ, 26 կգ ընդհանուր քաշով, 18000 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 520 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓԵւՍԱՓԱՄ» մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա (2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1025-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 հունվարի 2013 թվականի N Մ- 017 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 4

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունվարի 17-ի N 3/3.8-2/374-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի հունվարի 16-ի N ԴԴ/22/296-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունվարի 16-ի N ՎՄ/3-6/354 -13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված դեղորայքը, բժշկական պարագաները և սարքավորումները (4041 կգ ընդհանուր քաշով, 150642.78 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 8200 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա (2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1025-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

25 հունվարի 2013 թվականի N Մ- 018 -Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N Մ-947-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱԳԱՊԵ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունվարի 21-ի N 3/3.8-2/505-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի հունվարի 11-ի N ՖԲ/ԱնՄ-5/94-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունվարի 10-ի N ՎՄ/3-6/56-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի Հյուսիսային Կարոլինա նահանգի մեթոդիստական եկեղեցու կողմից Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով «Ագապե» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (1392 տեղ, 8182 կգ ընդհանուր քաշով, 93876.94 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 7595 ԱՄՆ-ի դոլար, բեռի և բաշխման ցանկերը կցվում են, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 30-ի «Ագապե» բարեգործական կազմակեր-պության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Մարդկային տառապանքը որպես պատերազմի և բնական աղետի հետևանք» ծրագրի մասին» N Մ-947-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

AGAPE

ԳՈՒՅՔԱՑՈՒՅՑ - VAJES9885712
Բեռնագիր - NALE04105801
1 x 40' կոնտեյներ - ZCSU 8237405
Կապարակնիք - 37898
Բեռնված 2012 թ. դեկտեմբերի 16-ին
Միացյալ Մեթոդիստական եկեղեցու
Արևմտյան Հյուսիսային Կարոլինայի համաժողովի (թեմի) կողմից
Փ. 18005
ԱՄՆ, Հյուսիսային Կարոլինա, Շարլոտ, 28212

Պարունակությունը՝ նվիրաբերված մարդասիրական օգնություն, իրեր ոչ վաճառքի համար

Առաքիչ՝ Միացյալ Հայկական Հիմնադրամ
Ն. Խաղաղության պողոտա 1101
ԱՄՆ, ԿԱ, Գլենդել, 91202-4316

Առաքման վայր՝ ԱՄՆ «ԱԳԱՊԵ» ԿԲԿ ՀՀ մասնաճյուղ
Նիկոլ Դումանի 24ա
Հայաստանի Հանրապետություն, Երևան, 375028,
Նարա Մելքոնյան, հեռախոս՝ 011-37410-26-07-56

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԱՐԿՂ | Միավոր | Քաշը (կգ) | Արժեք |
|---|---|---|---|---|
| Անկողնային պարագաներ | 11 | -------- | 103 | 1,049.80 |
| Շինարարական պատվանդան փայտ կտրելու համար՝ իշոտնուկ | 2 | 2 | 33 | 30.00 |
| Երեխաների Ամանորյա տուփեր | 855 | 855 | 1050 | 15,806.40 |
| Նոր հագուստ | 43 | -------- | 455.6 | 8,975.40 |
| Օգտագործված հագուստ և օժանդակ պարագաներ | 282 | -------- | 3805.4 | 48,853.60 |
| Կահույք - մանկական խաղավայր/մանեժ | 1 | 1 | 34 | 70.00 |
| Պահածոյացված սննդամթերք | 61 | -------- | 509 | 1,220.40 |
| Հիգիենիկ պարագաներ | 3 | -------- | 43 | 527.80 |
| Օգտագործված վարագույր/սեղանի սփռոցներ | 1 | -------- | 15 | 112.00 |
| Նավթավառներ | 2 | 2 | 68 | 300.00 |
| Բժշկական սարք - գերավտոկլավային մանրէազերծիչ | 1 | 1 | 36 | 800.00 |
| Դպրոցական գրասեղաններ | 31 | 31 | 564 | 677.04 |
| Դպրոցական պարագաներ | 34 | -------- | 451 | 1,605.30 |
| Կարուձևի պարագաներ | 49 | -------- | 888 | 10,203.60 |
| Նոր կոշիկներ | 9 | -------- | 96 | 2,140.80 |
| Նոր խաղալիքներ | 7 | -------- | 31 | 451.80 |
| | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 1392 | | 8182 | 93,876.94 |

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՄՆ «ԱԳԱՊԵ» կրոնաբարեգործական կազմակերպության ՀՀ մասնաճյուղի հասցեով
2012թ. դեկտեմբեր ամսին ուղարկված մարդասիրական բեռան բաշխման ցուցակ

| Վայրը | Ապրանքի անվանումը | Բաշխվող քանակը կգ կամ հատ | Արժեքը ԱՄՆԴ |
|---|---|---|---|
| ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքի և գյուղերի՝ «ԱԳԱՊԵ»-ում գրանցված սոցիալապես անապահով մոտ 700 ընտանիքներ | Անկողնային պարագաներ | 103 կգ | 1049.80 |
| | Երեխաների Ամանորյա տուփեր | 855 հատ | 16,806.40 |
| | Նոր հագուստ | 455.6 կգ | 8,975.40 |
| | Օգտագործված հագուստ և օժանդակ պարագաներ | 3805.4 կգ | 48,853.60 |
| | Հիգիենիկ պարագաներ | 43 կգ | 527.80 |
| | Օգտագործված վարագույր/սեղանի սփռոցներ | 15 կգ | 112.00 |
| | Նավթավառներ | 2 հատ | 300.00 |
| | Դպրոցական գրասեղաններ | 31 հատ | 677.04 |
| | Դպրոցական պարագաներ | 451 կգ | 1,605.30 |
| | Կարուձևի պարագաներ | 888 կգ | 10,203.60 |
| | Նոր կոշիկներ | 96 կգ | 2,140.80 |
| | Նոր խաղալիքներ | 31 կգ | 484.80 |
| Բերձորի «Երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ | Պահածոյացված խառը սննդամթերք | 509 կգ | 1,220.40 |
| | Կահույք - մանկական խաղավայր/մանեժ | 1 հատ | 70 |
| Բնակելի տների վերանորոգման ժամանակ կամավորական խմբերի կողմից օգտագործելու նպատակով | Շինարարական պատվանդան փայտ կտրելու համար՝ իշոտնուկ | 2 հատ | 50 |
| ԼՂՀ Քաշաթաղի բուժմիավորում | Բժշկական սարք - գերավտոկլավային մանրէազերծիչ | 1 հատ | 800 |

ԱՄՆ «ԱԳԱՊԵ» ԿՐՈՆԱԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀՀ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ՏՆՕՐԵՆ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԱՄՆ «ԱԳԱՊԵ» ԿԲԿ ՀՀ մասնաճյուղի հասցեով ուղարկված 1392 տեղով, 8182 կգ համախառն քաշով և 93,876.94 ԱՄՆԴ արժողությամբ մարդասիրական բեռի կազմում գտնվող 855 Ամանորյա տուփերի պարունակության մոտավոր ցանկ

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՔԱՆԱԿԸ |
|---|---|
| Նոր տուփեր | 855 հատ |
| Մեծ տետրեր | 300 հատ |
| Մարկերներ | 355 տուփ |
| Սանրեր և մազի խոզանակներ նոր | 1098 հատ |
| Մանկական փոքր ծածկոցներ նոր | 110 հատ |
| Գունավոր մատիտներ | 875 տուփ |
| Յուղամատիտներ | 476 տուփ |
| Սև մատիտ | 4371 հատ |
| Խաղալիք ավտոմեքենաներ նոր | 298 հատ |
| Փոքր գնդակներ նոր | 248 հատ |
| Ներկելու գրքեր | 722 հատ |
| Գլխարկներ նոր | 403 հատ |
| Կավիճ | 100 տուփ |
| Նկարի շրջանակ նոր | 59 հատ |
| Մատիտի սրիչներ | 579 հատ |
| Ձեռնոցներ նոր | 465 զույգ |
| Բլոկնոտներ | 819 հատ |
| Մազակալներ նոր | 4007 հատ |
| Փոքր հայելիներ | 151 հատ |
| Քանոններ | 139 հատ |
| Գուլպաներ նոր | 1397 զույգ |
| Փափուկ խաղալիքներ նոր | 450 հատ |
| Կպչուն նկարներ/ստիկերներ | 755 հատ |
| Տիկնիկներ նոր | 104 հատ |
| Խաղեր նոր | 481 հատ |
| Ատամի խոզանակ | 949 հատ |
| Մանկական նկարազարդ գրքեր | 108 հատ |
| Դպրոցական հաշվիչներ | 18 հատ |
| Ռետիններ | 580 հատ |
| Սոսինձներ | 111 հատ |
| Կոշտ խաղալիքներ նոր | 503 հատ |
| Գրիչներ | 318 հատ |
| Փազլներ | 29 հատ |
| Շարֆեր նոր | 32 հատ |
| Վերնաշապիկներ նոր | 164 հատ |
| Սրբիչներ նոր | 139 հատ |
| Օճառ | 204 հատ |
| Ցատկապարաններ | 32 հատ |
| Մանկական զարդեր | 287 հատ |
| Պլաստիլին | 45 տուփ |
| Մկրատներ | 43 հատ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 հունվարի 2013 թվականի N Մ- 019 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N Մ-835-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունվարի 9-ի N 3/3.8-1/17365-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի դեկտեմբերի 28-ի N ԱԱ/3-4/14094-13 եզրակացությունները,* ***ո ր ո- շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգոր-ծական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» ծրագրի մասին (2-րդ փուլ)» N Մ-835-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ալբերտ Կարախանյան և որդիներ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00441423) և «Ալկար Տրաստ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00448465) 2012 թվականի դեկտեմբերի 24-ին կնքված՝ N 18/Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բետոնի մատակարարում՝ 5197600 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 հունվարի 2013 թվականի N Մ - 020 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունվարի 21 -ի N 3.8-1/16837-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 20-ի N ՎՄ/3-4/12777-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա (2012 թվականի նոյեմբերի 15-ի N Մ-919-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հանքոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04716703) 2012 թվականի դեկտեմբերի 11-ին կնքված՝ N 30/15-12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Երևան քաղաքի թիվ 9 մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ-ի նոր ստեղծվող վերականգնողական ծառայության համար վերականգնողական պարագաների պատրաստում՝ 1000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ալեպրոֆիլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02566803) 2012 թվականի դեկտեմբերի 5-ին կնքված՝ N 14-12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Արաբկիր» ԲՀ-ԵԴՄԻ Արմավիրի ԵԶՎԿ-ի 2-րդ հարկի աջ մասի համար պատրաստել և տեղադրել ալյումինե դռներ, պատուհաններ՝ 2766011 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 հունվարի 2013 թվականի N Մ - 021 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-803-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունվարի -ի N 3/3.8-1/ -13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունվարի -ի N ՎՄ/3-4/ -13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող «Երևանի կենդանաբանական այգու բարեկարգում և արդիականացում» ծրագրի մասին» N Մ-803-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Աֆալյան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00861358) 2012 թվականի նոյեմբերի 2-ին կնքված N ԿԱ-ԲԸԱՀԱՇՁԲ-12/03 (2012 թվականի նոյեմբերի 30-ին կնքված N 1 փոփոխության խմբագրությամբ) պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կենդանաբանական այգու ավտոբուսային կանգառի կառուցման աշխատանքների իրականացում՝ 1657217.1 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Բիդեք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00450801) 2012 թվականի նոյեմբերի 19-ին կնքված N ԿԱ-ԲԸԱՀԱՇՁԲ-12/01-1 (2012 թվականի դեկտեմբերի 20-ին կնքված N 1 փոփոխության խմբագրությամբ) պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բորենիների ազատավանդակի կառուցման աշխատանքների իրականացում՝ 3999980 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**25 հունվարի 2013 թվականի N Մ- 022 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-981-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունվարի 21-ի N 3/3.8-1/504-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունվարի 21-ի N ՎՄ/3-4/572-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի Կապան և Գեղի համայնքներում նախադպրոցական հաստատությունների ենթակառուցվածքների բարելավում ու երեխաների համար ժամանցի հնարավորությունների ստեղծում» ծրագրի մասին» N Մ-981-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Երիցվանք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09405726) 2012 թվականի դեկտեմբերի 13-ին կնքված՝ N WVA/KAP ADP/CW-13/001/01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Կապանի թիվ 2 մանկապարտեզի դահլիճի վերանորոգում՝ 2919600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**25 հունվարի 2013 թվականի N Մ- 023 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-982-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունվարի 21-ի N 3/3.8-1/524-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունվարի 21-ի N ՎՄ/3-4/571-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Կրթության պայմանների բարելավում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան քաղաքի թիվ 4, 8, 10 և 12 դպրոցներում» ծրագրի մասին» N Մ-982-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Երիցվանք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09405726) 2012 թվականի դեկտեմբերի 13-ին կնքված՝ N WVA/KAP ADP/CW-13/001/02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Կապանի թիվ 8, 10, 12 դպրոցների սանհանգույցների վերանորոգում՝ 16112841 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

| 10. | Ձեր բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ներմուծվող ապրանքների ցանկը ներկայացվում է կից հավելվածով՝<br>7677 կիլոգրամ բեռ<br>433,366.36 ԱՄՆ դոլար արժեքով<br>Տեղափոխում՝ 8,150.00 ԱՄՆ դոլար |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Աբովյանի մաքսային պահեստի ծախսեր՝ 1,500.00 ԱՄՆ դոլար, |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Չի նախատեսվում: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Պարբերաբար հաշվետվություններ են ներկայացվելու ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամին և օրենքով սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

Միացյալ հայկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչություն
Ալեք Մանուկյան 9, 2-րդ հարկ
Երևան, 0070 Հայաստան
Հեռ.՝ 010-51-20-50
Բջջ.՝091-42-51-21
Պատասխանատու՝ Արմեն Գյուլխասյան

01574053

| ԴՈՆՈՐ | ՆԿԱՐԱ-ԳՐՈՒԹՅՈՒՆ | ՍՏԱՑՈՂ | Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ | Բեռների հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը: | Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս | ԿՈԴ | ԱՐԿՂ | ՊԱԼԵՏ | ՔԱՇ ԿԳ | ԱՐԺԵՔ ԱՄՆ ԴՈԼԱՐ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հայաստանի Ամերիկյան Համալսարան | Գրքեր և ամսագրեր | Օրդյան Անահիտ - ՀԱՀ | Հայաստանի ամերիկյան համալսարան հիմնադրամ, Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող.40, ՀՎՀՀ 01511187, | Նվիրատվություն ուսանողության և հանրության օգտագործման նպատակով | Նվիրատվություն ուսանողության և հանրության օգտագործման նպատակով | SC 296-01 | 1 | | 9 | 172.00 |
| | էլեկտրական ջրատաքներ | | | Հատկացվում է համալսարանում օգտագործման նպատակով | Հատկացվում է համալսարանում օգտագործման նպատակով | SC 296-02 | | 1 | 157 | 4,635.00 |
| | էլեկտրոնային ռիդերներ | | | Հատկացվում է համալսարանում օգտագործման նպատակով | Հատկացվում է համալսարանում օգտագործման նպատակով | SC 296-12 | 1 | | 6 | 1,743.87 |
| Հայկական ակնաբուժության նախագիծ/ Ալկոն լաբորատորիաներ ինկ.. | Բժշկական պարագաներ | Եղիազարյան Նունե - Հայկական ակնաբուժության նախագիծ | /Հայկական ակնաբուժության նախագիծ, գտնվելու վայրը՝ Երևան, Այգեստան 5 րդ փ., տ. 7 իրավաբանական հասցեն՝ Երևան, Վրացական 9, բն. 44 ՀՎՀՀ՝ 00074765 | Բեռը օգտագործվելու է ՀԱՆի Աչքի շարժական հիվանդանոցում դիագնոստիկայի և բուժման համար, ՀԱՆի- անհասության ռետինոպաթիայի սքրինինգային և բուժման ծրագրի շրջանակներում, դեղորայքի և սարքավորումների մի մասը տրամադրվելու է Ս.Վ. Մալայանի անվ. Ակնաբուժական կենտրոնին օգտագործման համար: | Շահառուներն են հիմնականում -Կոտայքի, Տավուշի, Լոռու, Շիրակի մարզի խոցելի խմբերի ներկայացուցիչները<br>- անհաս և ցածր քաշով ծնված երեխաները | SC 296-09 | 4 | | 54 | 136,700.00 |
| | Դեղեր | | | | | SC 296-10 | 1 | | 21 | 18,145.00 |
| Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն | Մանկական սնունդ | Ներսեսյան Հարութ - Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ | Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ Հասցե՝ ք. Երևան, Նիկոլ Դուման 22 ՀՎՀՀ 00032803 | Այդ ապրանքատեսակը բաշխվելու է մինչև 2 տարեկան անապահով ընտանիքների երեխաներին՝ Կաթ հայ մանուկներին ծրագրի շրջանակներում, որը գործում է 1991 թվականից: | Տրամադրվելու է բարեգործական նպատակներով | SC 296-11 | | 11 | 4,261 | 27,720.00 |

| ԴՈՆՈՐ | ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ՍՏԱՑՈՂ | Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ | Բեռների հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը: | Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս | ԿՈԴ | ԱՐԿՂ | ՊԱԼԵՏ | ՔԱՇ ԿԳ | ԱՐԺԵՔ ԱՄՆ ԴՈԼԱՐ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հայօգնության ծրագիր | Սերմեր և համակարգիչ | Տեր-Ղազարյան Ռուզաննա - <Հյուման Դիգնիթի ընդ Փիս> Բարեգործական հիմնադրամ | <Հյուման Դիգնիթի ընդ Փիս> Բարեգործական հիմնադրամ, Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Հրաչյա Քոչար 14-45, Իրավաբանական հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Հրաչյա Քոչար 14-45,ՀՎՀՀ՝ 00084123 | <Հյուման դիգնիթի ընդ Փիս> (HDP) Բարեգործական հիմնադրամը ՀՀ Արարատի մարզի Սիս, Նիզամի, Խաչփար, Հայանիստ և Սյունիքի մարզի Գորայք համայնքներում իրականացնում է գյուղատնտեսական նշանակության դրամաշնորհային ծրագրեր, հիմնադրամին հասցեագրված բեռը նախատեսված է Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող «Եկամտաբեր Ծրագրեր Գյուղական Համայնքներում» և Էրիան Ինթերնեյշնլ և «Գեոթիմ» ՓԲԸ-ի կողմից ֆինանսավորվող "Բանջարաբուծության նոր տեխնոլոգիայի կիրառմամբ բարեկեցիկ կյանքի ապահովում" ծրագրերի շահառուների համար (100 ընտանիք): | Բեռի՝ բանջարանոցային մշակաբույսերի սերմեր, ստացման իրական շահառու են հանդիսանում ծրագրերում ընդգրկված թվով 100 ընտանիքներ: Բանջարանոցային մշակաբույսերի սերմերը նախատեսված են վերը նշված համայնքներում ծրագրային գործողությունների իրականացման համար, մասնավորապես՝ բանջարեղենի մշակության նոր տեխնոլոգիաների կիրառման նպատակով: | SC 296-15 | 1 | | 50 | 437.00 |
| Արյան կանադական ծառայություններ | Աշխատանքային համազգեստ | Դաղբաշյան Ս - «Պրոֆ. Ռ.Օ.Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոն» | ՀՀ Առողջապահության նախարարության «Պրոֆ. Ռ.Օ.Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոն» ՓԲԸ, ՀՎՀՀ- 00010235, 0014, ք. Երևան, Հր. Ներսիսյան 7 | ՀՀ Արյան ծառայության համակարգի բուժ. աշխատակիցների աշխատանքային համազգեստների համալրում, անվարձահատույց տրամադրում: | ՀՀ Արյան ծառայության մեջ ընդգրկված բուժհաստատություններ և միավորներ՝ | SC 296-13 | | 4 | 1,721 | 50,000.00 |
| Դևիս Բժշկական կենտրոն-Կատապետյան Հրայր | Էխոյի սարքավորումներ | Մուրադյան Լիզա-Նորք-Մարաշ բժշկական կենտրոն | <Նորք-Մարաշ> Բժշկական կենտրոն> ՓԲԸ Իրավաբանական հասցեն, որը նաև նույն գտնվելու վայրն է - ՀՀ, ք. Երևան, Արմենակյան 13₂. ՀՎՀՀ-ն - 01508793 | Նորք-Մարաշ բժշկական կենտրոնի օգտագործման համար | Տրամադրվելու է Նորք-Մարաշ բժշկական կենտրոնի հիվանդներին | SC 296-07 | | 2 | 552 | 8,500.00 |



| ԴՈՆՈՐ | ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ՍՏԱՑՈՂ | Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ | Բեռների հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը: | Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս | ԿՈԴ | ԱՐԿՂ | ՊԱԼԵՏ | ՔԱՇ ԿԳ | ԱՐԺԵՔ ԱՄՆ ԴՈԼԱՐ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հուլոգիկ կորպորացիա | Ռենտգենային սարքեր | Կարապետյան Կ. - Գյումրու Բժշկական Կենտրոն | <<Գյումրու Բժշկական Կենտրոն>> ՓԲԸ, ք.Գյումրի, Գ.Նժդեհի 3/3, ՀՎՀՀ 05539526, | ա/Երեք հարյուր հազար և ավելի ազգաբնակչություն ունեցող Շիրակի մարզի բնակիչներին ոսկրաբանական հետազոտություններ օստեոպորոզի վաղ հայտնաբերման և պրոֆիլակտիկ բուժման նպատակով, բ/սարքը գործելու է նորաբաց <<Գյումրու բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ում բարեգործական ծրագրով, որտեղ հետազոտման համար կարող են դիմել ոչ միայն Շիրակի մարզից այլ տարբեր մարզերից: | ա/Սարքի իրական շահառուն հանդիսանում է <<Գյումրու բժշկական կենտրոն>> ՓԲԸ–ն ի դեմս Ա.Իսահակյանի և Շիրակի մարզի գլխավոր օրթոպեդ-վնասվածքաբան Խ.Ջ.Կարապետյանը բ/սարքի տրամադրման նպատակն է ոսկրաբանական անվճար հետազոտություններ կատարել Գյումրի քաղաքում և Շիրակի մարզում: | SC 296-04 | | 1 | 529 | 25,000.00 |
| Օհանյան Միքայել (Մասաչուսեթս) | Էլեկտրոնային սարքեր | Մուրադյան Մուրատ - Հայաստանի Պետական Ճարտարագիտական Համալսարան | Հայաստանի Պետական Ճարտարագիտական Համալսարան (Պոլիտեխնիկ), Պետական ոչ առևտրային կազմակերպություն Երևան-Տերյան- 105, ՀՎՀՀ -01504054: | Բեռը հատկացվում է ուսումնական և գիտական գործընթացների իրականացման նպատակով: | ստացման հիմնական շահառուն հանդիսանում է Հայաստանի Պետական Ճարտարագիտական Համալսարան (Պոլիտեխնիկ), Պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ստացվող ժամանակակից սարքավորումները պետք ընդլայնեն <<միջֆակուլտետային ավտոմատ նույնականացման լաբորատո-րիայի>> ուսումնական և գիտական գործընթացների հնարավորությունները: | SC 296-03 | 8 | | 168 | 37,600.00 |
| | Դեղեր | | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության <<Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպություն, Գտնվելու վայրը - ք. Երևան, Նոր-Արեշ 35 Իրավաբանական հասցեն - ք. Երևան, Նոր-Արեշ 35 ՀՎՀՀ - 02508003 | | | SC 296-14 | 2 | | 18 | 9,549.60 |
| Միացյալ հայկական հիմնադրամ | Դեղեր | Դումանյան Դերենիկ-Առողջապահության նախարարություն | | ըստ ՀՀ կառավարության թիվ 1432-Ն առ 14.10.2004թ.որոշմամբ հաստատված կարգի: | ըստ ՀՀ կառավարության թիվ 1432-Ն առ 14.10.2004թ.որոշմամբ հաստատված կարգի: | SC 296-16 | | 1 | 118 | 107,100.30 |

| ԴՈՆՈՐ | ՆԿԱՐԱ-ԳՐՈՒԹՅՈՒՆ | ՍՏԱՑՈՂ | Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ | Բեռների հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը: | Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս | ԿՈԴ | ԱՐԿՂ | ՊԱԼԵՏ | ՔԱՇ ԿԳ | ԱՐԺԵՔ ԱՄՆ ԴՈԼԱՐ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Միացյալ հայկական հիմնադրամ | Դեղեր | Ավետիսյան Գ. «ԼՂՀ ներկայացուցչությունը Հայաստանում | ՀՀ-ում ԼՂՀ Մշտական Ներկայացուցչություն, Երևան, Շ. Զարյան 17ա, ՀՎՀՀ 01538293» | Բարեգործական, ուղղարկվում է ԼՂՀ սոցիալական ապահովության նախարարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, ինչից հետո հանձնաժողովը բաշխում է բեռը շահառուներին | Բարեգործական, ուղղարկվում է ԼՂՀ սոցիալական ապահովության նախարարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, ինչից հետո հանձնաժողովը բաշխում է բեռը շահառուներին | SC NKR 296-17 | 1 | | 14 | 6,063.59 |
| | | Ընդամենը | | | | | 19 | 20 | 7,677 | 433,366.36 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 հունվարի 2013 թվականի N Մ-042-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունվարի 21-ի N 3.1/3.8-2/503-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի հունվարի 21-ի N ԴԴ/22/448-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունվարի 23-ի N ՎՄ/3-6/689-13 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Direct Relief International» կազմակերպության կողմից ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղի (մեկ տեղ, 102 կգ ընդհանուր քաշով, 60717.67 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված դեղի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 հունվարի 2013 թվականի N Մ-043-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունվարի 21-ի N 3.1/3.8-2/523-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի հունվարի 22-ի N ԴԴ/22/507-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունվարի 17-ի N ՎՄ/3-6/492-13 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «AmeriCares» հիմնադրամի կողմից ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղի (մեկ տեղ, 100 կգ ընդհանուր քաշով, 17258.40 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 460 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված դեղի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 հունվարի 2013 թվականի N Մ-044-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունվարի 21-ի N 3.1/3.8-2/513-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի հունվարի 21-ի N ԴԴ/22/451-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունվարի 17-ի N ՎՄ/3-6/493-13 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղերի և բժշկական նշանակության ապրանքների (18 տեղ, 5837 կգ ընդհանուր քաշով, 285684.34 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 8200 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 հունվարի 2013 թվականի N Մ-045-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 3)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունվարի 21-ի N 3.1/3.8-2/516-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի հունվարի 22-ի N ԴԴ/22/505-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունվարի 17-ի N ՎՄ/3-6/494-13 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «AmeriCares» հիմնադրամի կողմից, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղերի և բժշկական նշանակության ապրանքների (30 տեղ, 4532 կգ ընդհանուր քաշով, 302340.13 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 4960 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 հունվարի 2013 թվականի N Մ-046-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունվարի 23-ի N 3.1/3.8-2/676-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի հունվարի 25-ի N ԴԴ/22/635-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունվարի 24-ի N ՎՄ/3-6/727-13 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված լաբորատոր ախտորոշիչ նյութերի (մեկ տեղ, 18.5 կգ ընդհանուր քաշով, 4850 շվեյցարական ֆրանկին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 308.70 շվեյցարական ֆրանկ, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:
3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 հունվարի 2013 թվականի N Մ-047-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-954-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N 1)

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունվարի 23-ի N 3.1/3.8-1/667-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունվարի 25-ի N ՎՄ/3-4/793-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն» ծրագրի մասին» N Մ-954-Ա որոշմամբ (2012 թվականի ապրիլի 27-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Նուշիկյան ասոցիացիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01510288) 2012 թվականի դեկտեմբերի 21-ին կնքված՝ N 01/2012 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 5500 հատ ամանորյա բացիկի ձեռքբերում՝ 550000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 հունվարի 2013 թվականի N Մ-048-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունվարի 22-ի N 3.1/3.8-1/580-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունվարի 25-ի N ՎԱ/3-8/729-13 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա և սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Է. Կ. Պ.» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01543457) 2012 թվականի դեկտեմբերի 26-ին կնքված՝ N 63 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կենտրոնատեղի շինարարության աշխատանքային նախագծի ինժեներական բաժինների փորձաքննության աշխատանքների իրականացում՝ 450000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 հունվարի 2013 թվականի N Մ-049-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N Մ-946-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

**(«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունվարի 23-ի N 3.1/3.8-1/675-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունվարի 25-ի N ՎՄ/3-8/731-13 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի 2013 թվականի հունվարի 16-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի N Մ-176-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքների մասին» N Մ-946-Ա որոշման 2-րդ կետի 3-րդ պարբերությունում «28533526 դրամի չափով» բառերը փոխարինել «48835248 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ու Մ

**25 հունվարի 2013 թվականի N Մ - 050 - Ա**
**քաղ. Երևան**

## ՈՒՋԱՆԻ «ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԲԱՇԽՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունվարի 22-ի N 3.1/3.8-2/584-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի հունվարի 23-ի N ՖԲ/ԱնՄ-5/362-13, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության հարցերի նախարարության 2013 թվականի հունվարի 22-ի N 04/07-1/534-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունվարի 23-ի N ՎՄ/3-6/690-13 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի 2013 թվականի հունվարի 23-ի N 01/12.1/184-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Նիդեռլանդներից «Global Aid Network» բարեգործական կազմակերպության կողմից աջակցության նպատակով Ուջանի «Զորավար Անդրանիկի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռի (1.744 տեղ, 11580 կգ ընդհանուր քաշով, 2750 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3310 եվրո, բեռի բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Ուջանի «Զորավար Անդրանիկի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՈՒՋԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՀԱՍՑԵՈՎ ՏՍՏՑՎԱԾ

# Բեռի բաշխման ցանկ

968 եվրո արժողությամբ աշակերտական 200 սեղաններից (օգտագործված) 147-ը, 641 եվրո արժողությամբ աթոռներից (օգտագործված) 147-ը, 119 եվրո արժողությամբ գրատախտակներից 8-ը տրվելու են մարզի առանձին դպրոցներին, մասնավորապես՝

1. 50 աշակերտական սեղան (օգտագործված) 242 եվրո արժողությամբ, 50 աշակերտական աթոռ (օգտագործված) 115 եվրո արժողությամբ,, 1 գրատախտակ(օգտագործված) 13 եվրո արժողությամբ – Գեղադիրի միջն. դպրոցին
2. 40 աշակերտական սեղան (օգտագործված) 192 եվրո արժողությամբ , 40 աշակերտական աթոռ (օգտագործված) 92 եվրո արժողությամբ, 1 գրատախտակ (օգտագործված) 13 եվրո արժողությամբ –Շղարշիկի միջն. դպրոցին
3. 25 աշակերտական սեղան (օգտագործված) 120 եվրո արժողությամբ , 25 աշակերտական աթոռ (օգտագործված) 57.5 եվրո արժողությամբ, – Օշականի միջն. դպրոցին
4. 32 աշակերտական սեղան (օգտագործված) 155 եվրո արժողությամբ , 32 աշակերտական աթոռ (օգտագործված) 74 եվրո արժողությամբ, 2 գրատախտակ (օգտագործված) 26 եվրո արժողությամբ,4 ուսուցչական սեղան (օգտագործված) 19 եվրո արժողությամբ – Ջամշլուի միջն. դպրոցին
5. 4 հատ գրատախտակ (օգտագործված) 52 եվրո արժողությամբ - Աշտարակի N 4 հիմնական դպրոցին
6. Մնացած 49 աշակերտական և տարբեր նշանակության սեղանները(օգտագործված) 235 եվրո արժողությամբ , 123 աշակերտական և նախադպրոցական հասակի երեխաների համար նախատեսված աթոռները(օգտագործված) 283 եվրո արժողությամբ , 7 պահարանները (օգտագործված) 84 եվրո արժողությամբ,1գրատախտակ (օգտագործված) 13 եվրո արժողությամբ մնում են Ուջանի միջնակարգ դպրոցի օգտագործման համար :
7. 1250 զույգ ռետինե երկարաճիտ կոշիկները 891 եվրո արժողությամբ բաժանվելու են ուսուցիչներին, աշակերտների ծնողներին և համայնքի անդամներին:
8. 8 հատ տարբեր նշանակության սպորտային հարմարանքները (օգտագործված) 47 եվրո արժողությամբ մնում են Ուջանի միջնակարգ դպրոցում:

Դպրոցի տնօրեն /Ա. Հարությունյան /

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 հունվարի 2013 թվականի N Մ- 051 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N Մ-500-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
**(Այբ» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունվարի 22-ի N 3.1/3.8-1/579-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունվարի 24-ի N ՎՄ/3-8/732-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1063-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին (Այբ» կրթական հիմնադրամ)» N Մ-500-Ա որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում «18.411.930 դրամ» բառերը փոխարինել «24.236.850 դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                            Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունվարի 2013 թվականի N Մ- 052 - Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-935-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունվարի 23-ի N 3/3.8-1/668-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունվարի24-ի N ՎՄ/3-4/730-13 գրությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սի. Օ. էՅ. էֆ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-935-Ա որոշմամբ (2012 թվականի հունվարի 20-ի N Մ-060-Ա և 2012 թվականի մայիսի 18-ի N Մ-379-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վանի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00412375) 2013 թվականի հունվարի 15-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լուսային դիոդների մատակարարում՝ 1050000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**25 հունվարի 2013 թվականի N Մ- 053 - Ա**
**քաղ. Երևան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N Մ-835-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱ-ՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻ («ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի տնօրենի 2013 թվականի հունվարի 23-ի N 3 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» ծրագիրը (2-րդ փուլ)» N Մ-835-Ա (2012 թվականի դեկտեմբերի 21-ի N Մ-1067-Ա խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «06.09.2012թ. - 30.12.2012թ.» բառերը փոխարինել «06.09.2012թ. – 28.02.2013թ.» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունվարի 2013 թվականի N Մ- 054 -Ա

## «ՕՐՐԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՕՐՐԱՆ-ՎԱՆԱՁՈՐ» ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 24-ի N 3/3.8-1/17051-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 02/8156/-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 24-ի N ՖԲ/ՄնԱ-5/9450-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 21-ի N ԴԴ/22/12878-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 21-ի N 03/07-1/1548-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի դեկտեմբերի 26-ի N ՎՄ/3-4/14019-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 24/ 2292 ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2012 թվականի դեկտեմբերի 26-ի N 101/ 104.3.2/7246-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, առաջին Եկմալյան 6, ՀՎՀՀ՝ 02552842) 2013 թվականին իրականացվող՝ 45780000 դրամ ընդհանուր արժեքով «Օրրան-Վանաձոր» օգնություն կարիքավոր ընտանիքներին» ծրագիրը (կցվում է):

2. Առաջարկել «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-



ման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ　　　　Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատում եմ
"Օրրան" բարեգործական հասարակական կազմակերպություն
տնօրեն Արմինե Հովաննիսիյան

# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
## «ՕՐՐԱՆ-Վանաձոր» օգնություն կարիքավոր ընտանիքներին

2013թ.

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակները | Օգնել ֆինանսական դժվար կացությունում հայտնված ընտանիքների երեխաներին, նրանց շրջանում վերացնել մուրացկանությունը, աջակցել աղքատության մեջ գտնվող ընտանիքներին: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելը: |
| | Բարեգործը (բարեգործները) | Բաց Հասարակության Ինստիտուտի Օժանդակության Հիմնադրամ, , Հայաստանում և ԱՄՆ-ում «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն, Հովհաննիսյանների ընտանիք, Գրիգորյան բարեգործական հիմնադրամ (Անգլիա), Ջերարդ Գաֆեսճյան ընտանիքի հիմնադրամ (ԱՄՆ),Ակինյան ընտանիք. |
| 4 | Ծրագրի կատարողը | «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն<br>ՀՎՀՀ 02552842<br>Առաջին Եկմալյան 6<br>Երևան, Հայաստանի Հանրապետություն<br>Հեռ.՝ 53-51-67 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը (վայրերը), բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Վանաձոր<br>Սոցիալական բնագավառ |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն 45,780,000 (քառասունհինգ միլիոն յոթ հարյուր ութսուն հազար) դրամ |
| 7 | Բարեգործություն ստացողը | • 6-16 տարեկան 60 երեխա, ովքեր ապրում են սոցիալական ծայրահեղ դժվարություններ ունեցող, մուրացկանության շեմին գտնվող ընտանիքներում: Մի շարք երեխաներ աշխատում և մուրում են փողոցում: Երեխաների մեծ մասը միակողմանի ծնողազուրկ են, հաշմանդամ, բաժանված կամ ազատազրկված ծնողներ ունեն:<br>Շահառուների ընտրությունը կատարում է սոցիալական աշխատողը՝ նախապես մշակված չափանիշներով: Յուրաքանչյուր դեպք քննարկվում է Օրրանի մասնագիտական խմբում, որի մեջ մտնում են Օրրանի սոցիալական աշխատողը, մանկավարժները, հոգեբանը, բժիշկը եւ |



| | | |
|---|---|---|
| | | գործադիր տնօրենը: Շահառուների ընտրության հարցում Օրրանը համագործակցում է "ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության" Լոռու մարզի Վանաձորի քաղաքապետարանի սոցիալական բաժնի, սոցիալական ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև «ՀՀ Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների դեմ պայքարի բաժնի» հետ: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը սկսել է 2009թ. հոկտեմբերից և այն շարունակական է: Սույն ծրագիրը նախատեսված է 2013թ. հունվարի 1-ից մինչև 2013թ. դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար: Այն կգործի այնքան ժամանակ, որքան կազմակերպությունը հնարավորություն կունենա իրագործել իր առաքելությունը և այդ նպատակով կունենա ֆինանսական միջոցներ:այն շարունակական է: |
| 9 | Միջոցառումների (ըստ փուլերի, եթե այդպիսիք հնարավոր է առանձնացնել) նկարագրությունը և ժամկետները անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Օրրան ԲՀԿ-ն Վանաձոր Տիգրան Մեծ 4ա հասցեում գտնվող կենտրոնում մուրացիկ, թափառաշրջիկ եւ ծայրահեղ կարիքավոր ընտանիքների 60 երեխայի շաբաթը 6 օր մատուցում է տաք ճաշ եւ իրականացնում սոցիալական, կրթական, մշակութային, հոգեբանական եւ բժշկական ծառայություն:<br>• 60 երեխայի ամենօրյա սնունդ, նաև խոհանոցային սարքավորում և պարագաներ - տարեկան կազմում է 15,832,000 դրամ<br>• բժշկական և հոգեբանական ծառայություններ - տարեկան 1,830,000 դրամ<br>• սոցիալական ծարայություն,հագուստ և կոշիկ - տարեկան 4,793,000 դրամ<br>• մշակութային միջոցառումներ - տարեկան 500,000 դրամ<br>• դպրոցահասակ երեխաների տնային պարապմունքների կազմակերպում դպրոցից հետո. շաբաթական 6 օր 60 երեխայի համար, գրենական պիտույքների, ուսումնական նյութերի, պայուսակների ապահովում, նաև դպրոցական կահույք - տարեկան 9,285,000դրամ<br>• ձեռարվեստի խմբակներ՝ մակրամե, փայտամշակում, կավագործություն –տարեկան 2,340,000 դրամ<br>• արտասահմանից բեռների ներմուծում(բարերարների ցանկությամբ ուղարկված հագուստ, գրենական պիտույքներ, խաղալիք)– տարեկան 3,800,000 դրամ<br>Ընդամենը 38,380,000 դրամ (երեսունութ միլիոն երեք հարյուր ութսուն հազար ՀՀ դրամ ) |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | Ձեռք բերվելիք (ներմուծվող) ապրանքներ, ծառայություն-ների և աշխատանք-ների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | N | Ամսաթիվ | Պայմանագրի կամ հաշիվ ապրանքագրի համարը | Կազմակերպության կամ մատակարարի անվանումը | Նկարագրու-թյունը | ՀՀ դրամ տարեկան առանց ԱԱՀ |
| | | 1 | | | «ԱրմենՏել» ՀՁ ՓԲԸ | Հեռախոսային, ինտերնետային կապի մատակարարում | 1,000,000 |
| | | 2 | | | «ՀայՌուսգազար» ՓԲԸ | Գազի մատակարարում | 3,000,000 |
| | | 3 | | | "Լոռի-Ջրմուղկոյուղ"ՓԲԸ | Խմելու ջրի մատակարարում | 200,000 |
| | | 4 | | | " Հայաստանի էլեկտրական ցանցեր" ՓԲԸ "Դեբեդ" մ/ճ (Վանաձոր էլ.ցանց) | էլեկտրա էներգիայի մատակարարում | 1,200,000 |
| | | | | | «Սպարապետ» ՍՊԸ (ԱԱՀ վճարող չի հանդիսանում) | Մթերք | 12,200,000 |
| | | | | | | Բենզինի գնում | 800,000 |
| | | | | | | Դպրոցական կահույք | 2,700,000 |
| | | | | | | Խոհանոցային սարքավորում և պարագաներ | 2,735,000 |
| | | | | | | Ընդամենը | 23,835,000 |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր | Կենցաղային ծախսեր՝ պայմանագրեր «ԱրմենՏել»-ի, «Հայաստանի էլեկտրական Ցանցեր», "Լոռի-Ջրմուղկոյուղ" ՓԲԸ, «ՀայՌուսգազար» ՓԲԸ ընկերությունների, ինչպես նաև Վանաձոր քաղաքի «Օրրան» շենքի կահույքի պատվիրման և սարքավորումների գնման | | | | | |



| | | |
|---|---|---|
| | | պայմանագրեր այլ կազմակերպությունների հետ:<br>• ջուր՝ 200,000 դրամ<br>• էլեկտրաէներգիա՝ 1,200,000 դրամ<br>• հեռախոս՝, ինտերնետ 1,000,000 դրամ<br>• գազ-տարեկան՝ 3,000,000 դրամ<br>• գրասենյակային ծախսեր(կահույք, սարքավորում) 1,200,000 դրամ<br>• բենզին-800,000 դրամ<br>Ընդամենը 7,400,000 (յոթ միլիոն չորս հարյուր հազար դրամ) |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների այլ կազմակերպությունների հետ | 1.ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով<br>2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>3. ՀՀ առողջապահության նախարարություն<br>4. ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>5. Լոռու մարզի Վանաձորի քաղաքապետարանի սոցիալական վարչություններ<br>6. Տեղական ու միջազգային ՀԿ-ներ, որոնք աշխատում են ռիսկի խմբի երեխաների հետ<br>7.«ՀՀ Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների դեմ պայքարի բաժնի » հետ:<br>«Օրրանը» համագործակցում է նաև սոցիալական ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ԶԼՄ-ների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմները, թափանցիկությունը | • եռամսյակային և տարեկան հաշվետվություններ են ներկայացվում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով<br>• ամսական եւ եռամսյակային աշխատանքային ու ֆինանսական հաշվետվություններ են ներկայացվում «Օրրան» ԲՀԿ-ի տնօրենների խորհրդին<br>• գույքագրումը և բաշխումն իրականացվում են «Օրրան» ԲՀԿ –ի գործադիր տնօրենի, հաշվապահի և սոցիալական աշխատողի, ինչպես նաև շահառուների ստորագրություններով ու անձնագրային տվյալներով<br>• եռամսյակային հաշվետվություններ կառավարությանն առընթեր պետական հարկային ծառայություններին<br>• ֆինանսական աուդիտն իրականացվում է «Գրանթ Թորնթոն Ամիօ» ՍՊԸ-ի կողմից |

Ծրագրի ղեկավար՝ Արմենուհի Հովհաննիսյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**25 հունվարի 2013 թվականի N Մ- 055 -Ա**
**քաղ. Երևան**

## «ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ (ԱՆՎՃԱՐ ԴԵՂՈՐԱՅՔՈՎ ՄՇՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ)» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունվարի 21-ի N 3.1/3.8-1/525-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի հունվարի 23-ի N 02/323-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի հունվարի 21-ի N ԴԴ/22/450-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունվարի 22-ի N ՎՄ/3-8/ 612-13, եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ   է.***

1. Բարեգործական որակել «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Երևան, Նորքի այգիներ, 180, ՀՎՀՀ՝ 01533153) կողմից իրականացվող՝ 34335000 դրամ ընդհանուր արժեքով «Պարբերական հիվանդությամբ երեխաների բուժման (անվճար դեղորայքով մշտական ապահովման)» բարեգործական ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մոդուս Իմէքս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00874298) 2013 թվականի հունվարի 15-ին կնքված՝ N 04/2013 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Կոլխիցին» 1մգ դեղորայքի մատակարարում՝ 34335000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաս-



տանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզպետներին:

**ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հովարդ Կարագյոզյան» ԲԲՀԿ

տնօրեն .......... Կամո Տեր-Պետրոսյանի կողմից

«24» հունվարի 2013թ.

«ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2013թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ (ԱՆՎՃԱՐ ԴԵՂՈՐԱՅՔՈՎ ՄՇՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ)» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Պարբերական հիվանդությամբ տառապող երեխաների մշտական դեղորայքով ապահովումը՝ երիկամների վաղահաս ամիլոիդոզը-երիկամային անբավարարությունը և հաշմանդամությունը կանխելու համար: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել հարկային արտոնություններից |
| 3 | Բարեգործը | Հովարդ Կարագյոզյան Հիշատակի Ընկերակցություն (ԱՄՆ – Նյու-Յորք) |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն՝ իրավաբանական հասցեն - ք. Երևան, Նորքի Այգիներ-180, հարկ վճարողի հաշվառման համարը՝ ՀՎՀՀ-01533153, «Արաբկիր» բժշկական համալիր, ՀՀ առողջապահության նախարարության Պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոն: |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է ՀՀ բոլոր մարզերում, Երևան քաղաքում, ԼՂՀ-ում, հիմնական հետազոտությունները, բժշկական հսկողությունը և դեղորայքի բաշխումը կատարվելու է «Արաբկիր» բժշկական համալիրի Պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոնի մասնագետների կողմից:<br>Ծրագրի բնագավառը - առողջապահական: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագիրը ֆինանսավորվում է ամերիկյան Հովարդ Կարագյոզյան հիշատակի ընկերակցության կողմից, որի ընդհանուր արժեքն է 34.335.000 ՀՀ դրամ:<br><br>դեղորայք - «կոլխիցին» 1 մգ - 630.000 հաբ (31.500 տուփ, 1տուփը 20 հաբ)՝ 34.335.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Շահառուներն են Երևան քաղաքի, ՀՀ բոլոր մարզերի և ԼՂՀ-ի պարբերական հիվանդությամբ հիվանդ՝ կենտրոնում հաշվառված և 2013թ. ընթացքում նոր հայտնաբերվող, 0-18 տարեկան երեխաները: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը շարունակական է: Աշխատանքի նշված ծավալներն ու ծախսերը նախատեսված են 2013թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ժամկետի համար: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2013թ. ծրագրով նախատեսվում է պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոնում հաշվառված 2292 և նոր հայտնաբերված մոտ 300 0-18 տարեկան հիվանդների ընթացիկ հսկողություն և բուժում (անվճար մշտական դեղորայքի բաշխում) ամբողջ տարվա ընթացքում: Դեղորայքի համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը կազմում է 34.335.000 ՀՀ դրամ: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Հովարդ Կարագյոզյան» ԲԲՀԿ Երևանում գնելու է 630.000 հաբ ֆրանսիական «Կոլխիցին» 1մգ դեղորայքը և հանձնելու է պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոնին՝ հիվանդներին անվճար բաշխելու համար:<br>«Մոդուս Իմէքս» ՍՊԸ - ի հետ 15.01.2013թ. կնքված «Կոլխիցին» 1մգ դեղորայքի մատակարարման № 4/2013 պայմանագիր 34.335.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ, առանց ԱԱՀ-ի: 20% ԱԱՀ-ն կազմում է 6.867.000 ՀՀ դրամ: |

| | | |
|---|---|---|
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չկան: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրը համաձայնեցված է ՀՀ և ԼՂՀ առողջապահության նախարարությունների, «Արաբկիր» բժշկական համալիրի և Պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոնի տնօրինությունների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | ՀՀ և ԼՂՀ առողջապահության նախարարություններ, ՀՀ մարզպետարանների առողջապահության վարչություններ , պարբերական հիվանդությամբ հիվանդ երեխաների ծնողներ, «Հովարդ Կարագյոզյան» ԲԲՀԿ և «Արաբկիր» բժշկական համալիրի տնօրինություններ, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**25 հունվարի 2013 թվականի N Մ- 056 -Ա**

**քաղ. Երևան**

## «ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՆՎՃԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունվարի 21-ի N 3.1/3.8-1/514-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի հունվարի 22-ի N 02/276-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի հունվարի 16-ի N ԴԴ/22/276-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունվարի 16-ի N ՎՄ/3-4/344-13, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2013 թվականի հունվարի 16-ի N 01/ 145-13, Սյունիքի մարզպետի 2013 թվականի հունվարի 17-ի N 01/110-13 ու Լոռու մարզպետի 2013 թվականի հունվարի 18-ի N 101/104.3.2/267-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Երևան, Նորքի այգիներ, 180, ՀՎՀՀ՝ 01533153) կողմից իրականացվող՝ 471163500 դրամ ընդհանուր արժեքով «Երեխաների անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝ «ԷՍՋԵԹ Ֆարմա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00433863) 2013 թվականի հունվարի 09-ին կնքված՝ N 01/2013 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ատամնաբուժական պարագաների մատակարարում՝ 6156000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպությանը՝



1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Շիրակի, Սյունիքի, Լոռու մարզպետներին, Գյումրու, Վանաձորի ու Գորիսի քաղաքապետերին:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է

«Հովարդ Կարագյոզյան» ԲԲՀԿ

........ Կամո Տեր-Պետրոսյանի կողմից

«22» հունվարի 2013.թ.

«ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2013թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՆՎՃԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Հայաստանի և ԼՂՀ տարբեր մարզերի մինչև 14 տարեկան երեխաների անվճար ատամնաբուժական և ակնաբուժական օգնություն ստանալու հնարավորության ապահովումը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել հարկային արտոնություններից |
| 3 | Բարեգործը | Հովարդ Կարագյոզյան Հիշատակի Ընկերակցություն (ԱՄՆ – Նյու-Յորք) |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն<br>«Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության միջոցներով հիմնված 6 մասնաճյուղ մանկական ատամնաբուժական դարմանատները և 6 ակնաբուժական կաբինետները, որտեղ պայմանագրային հիմունքներով աշխատում են կազմակերպության կողմից վարձատրվող, տվյալ քաղաքներում բնակվող 29 ատամնաբույժներ, 6 ակնաբույժներ, 52 միջին բուժաշխատողներ (բուժքույրեր), 10 կրտսեր բուժաշխատողներ, 6 վարչական և 31 օժանդակ աշխատակիցներ:<br>Դարմանատներից 3-ը (Երևանի-2 և Վանաձորի) աշխատում են երկհերթ, իսկ 3 -ը (Գյումրիի,Գորիսի և Ստեփանակերտի)՝ մեկ հերթով:<br>Դարմանատներում գործում են 21 ընդհանուր ատամնաբուժական, 6 ակնաբուժական, 6 ռենտգեն, 6 ախտահանման կաբինետներ և 6 գրանցման բաժիններ՝ բոլորն էլ հագեցած ժամանակակից սարքավորումներով, գործիքներով և բուժանյութերով:<br>«Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ ք.Երևան, Նորքի Այգիներ-180, հարկ վճարողի հաշվառման համարը՝ ՀՎՀՀ-01533153: |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ մայրաքաղաք Երևանում, Շիրակի մարզի Գյումրի, Սյունիքի մարզի Գորիս, Լոռու մարզի Վանաձոր և ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքներում առողջապահության բնագավառում |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագիրն ամբողջությամբ ֆինանսավորվում է ամերիկյան Հովարդ Կարագյոզյան Հիշատակի ընկերակցության կողմից:<br>2013թ. համար նախատեսված են 471.163.500 դրամի ծախսեր՝ ըստ եռամսյակների բաշխված հավասարաչափ՝ 25-ական տոկոս (117.790.875 -ական դրամ), իսկ ըստ ուղղությունների բաշխված է հետևյալ ձևով. |

| | Դրամ |
|---|---|
| ա) բուժ.սարքավորումներ, գործիքներ, պահեստամասեր, կահույք, ծախսվող ատամնաբուժական պարագաներ, դեղորայք, ակնոցներ, օպտիկական ոսպնյակներ. | 97 321 500 |
| բ) բուժանձնակազմի աշխատավարձեր, հարկեր. | 283 684 500 |
| գ) վարչական աշխատակիցների աշխատավարձեր, հարկեր. | 47 268 000 |
| դ) կոմունալ ծախսեր (6 կլինիկաների էլեկտրաէներգիա, ջուր, հեռախոսավարձ, ինտերնետ, աղբահանություն, գազ). | 11 461 500 |
| ե) տրանսպորտային ծախսեր | 3 766 500 |
| զ) շենքերի պահպանության ծախսեր | 4 657 500 |
| է) գրասենյակային ծախսեր | 2 247 750 |
| ը) աշխատակիցների բժշկական ապահովագրության, շենքերի ու ավտոմեքենաների ապահովագրության, ադմինիստրատիվ և աուդիտորական ծախսեր | 13 061 250 |
| թ) գործուղման ծախսեր | 1 012 500 |
| ժ) ճառագայթային անվտանգության, սանիտարական վերահսկողության ծախսեր | 2 794 500 |
| ժա) գույքահարկ, հողի հարկ, բանկային գործառույթների և չնախատեսված ծախսեր | 3 888 000 |
| Ընդամենը | 471 163 500 |

| | | |
|---|---|---|
| 7 | Բարեգործություն ստացողը | Շահառուներն են ՀՀ մայրաքաղաք Երևանում, Շիրակի մարզի Գյումրի, Սյունիքի մարզի Գորիս, Լոռու մարզի Վանաձոր և ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքներում բնակվող մինչև 14 տարեկան բոլոր երեխաները, ովքեր կամավոր դիմում են մեր դարմանատներ ատամնաբուժական և ակնաբուժական օգնություն ստանալու նպատակով: Սպասարկվում են նաև նույն մարզերի սահմաններում տվյալ քաղաքների տարածքից դուրս բնակվող հաշմանդամ, ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքների մինչև 14 տարեկան երեխաները: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը շարունակական է: Աշխատանքի նշված ծավալներն ու ծախսերը նախատեսված են 2013թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ժամկետի համար: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակներում 2013թ. նախատեսվում է լիարժեքորեն ապահովել ՀՀ -ում գործող ատամնաբուժական կլինիկաներում հաշվառված 87590 և ԼՂՀ-ում հաշվառված 6749 երեխաների ընթացիկ ատամնաբուժական օգնության և կանխարգելիչ միջոցառումների անվճար իրականացումը: Տարվա ընթացքում ՀՀ-ում նոր հաշվառվող 11.200-11.600 և ԼՂՀ-ում նոր հաշվառվող 800-900 երեխաների լրիվ ատամնաբուժական սանացիայի և կանխարգելիչ միջոցառումների անվճար իրականացումը:<br>ՀՀ-ում ակնաբուժական 5 կաբինետներում նախատեսվում է հաշվառված 6196 և ԼՂՀ-ում հաշվառված 788 դիսպանսեր հիվանդների ընթացիկ ակնաբուժական օգնության և կանխարգելիչ միջոցառումների իրականացում, ՀՀ-ում նոր հաշվառվող 1.650-1.740 և ԼՂՀ-ում նոր հաշվառվող 150-160 երեխաների ակնաբուժական մանրակրկիտ հետազոտությունների և բուժման կազմակերպում, ակնոցի անհրաժեշտություն ունեցող ՀՀ-ից 1.360-1.440 և ԼՂՀ-ից 140-160 երեխաների անվճար ակնոցներով ապահովում, օպտիկական ոսպնյակների անհրաժեշտություն ունեցող 15-20 երեխաների անվճար ոսպնյակներով ապահովում և մշտական դեղորայքային բուժման անհրաժեշտություն ունեցող ՀՀ-ից 840-910 և ԼՂՀ-ից 160-190 երեխաների անվճար դեղորայքով և համապատասխան բուժական պրոցեդուրաներով ապահովում:<br>Ընդհանուր առմամբ 2013թ. նախատեսվում է ՀՀ-ում 107.000-108.000 և ԼՂՀ-ում 8.000-9.000 ատամնաբուժական, և ՀՀ-ում 22.500-23.200 և ԼՂՀ-ում 3.000-3.300 ակնաբուժական հաճախումների լիարժեք ապահովում:<br>Նշված միջոցառումների իրականացման համար ՀՀ-ում նախատեսված ֆինանսական միջոցների ծավալը կազմում է 435.321.000 ՀՀ դրամ, իսկ ԼՂՀ-ում՝ 35.842.500 ՀՀ դրամ: |



| | | |
|---|---|---|
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 2013թ. բուժսարքավորումների, գործիքների, դեղորայքի, ակնոցների և ծախսվող ատամնաբուժական պարագաների մատակարարման համար պայմանագրեր ենք կնքելու ԱՄՆ «Շայն» ընկերության, Երևանում «էլդեքս» ՓԲԸ, «էսզեթ Ֆարմա» ՍՊԸ, ՀՁ «Լաէկա» ՍՊԸ, «Մայր Օպտիկ» ՍՊԸ հետ:<br>ԱՄՆ-ից պիտի գնվեն 19.035.000 դրամի բժշկական պարագաներ և դեղորայք, որոնք Երևան են տեղափոխվելու Միացյալ Հայկական Ֆոնդի միջոցով, իսկ Երևանում պիտի գնվեն 78.286.500 դրամի բժշկական պարագաներ, սարքեր, կահույք, դեղորայք, ակնոցներ, ոսպնյակներ:<br>«էսՁեթ Ֆարմա» ընկերության հետ 09.01.2013թ. կնքված ատամնաբուժական դեղամիջոցների մատակարարման N01/2013 պայմանագիր 6.156.000 դրամ ընդհանուր արժողության, առանց ԱԱՀ-ի: 20%- ԱԱՀ-ը կազմում է 1.231.200 դրամ: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | 87.363.000 դրամ (որից 47.268.000 դրամը վարչական աշխատակիցների աշխատավարձեր և 40.095.000 դրամը՝ տնտեսական), որը կազմում է ծրագրի համար նախատեսված ընդհանուր ծախսերի (471.163.500) 18,54%: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրը համաձայնեցված է ՀՀ և ԼՂՀ առողջապահության նախարարությունների, Երևանի քաղաքապետարանի և Շիրակի, Սյունիքի, Լոռու մարզպետարանների առողջապահության վարչությունների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | ՀՀ օրենսդրության շրջանակներում ՀՀ և ԼՂՀ առողջապահության նախարարություններ, Երևանի քաղաքապետարանի և Շիրակի, Լոռու, Սյունիքի մարզպետարանների առողջապահության վարչություններ, ՀՀ հարկային ծառայություն, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովին եռամսյակային և տարեկան հաշվետվությունների ներկայացում, ամենամյա աուդիտ, բուժվող երեխաների ծնողներ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**25 հունվարի 2013 թվականի N Մ- 057 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ- 1074-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ** («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունվարի 22-ի N 3.1/3.8-2/387-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի հունվարի 18-ի N ԴԴ/22/374-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունվարի 16-ի N ՎՄ/3-6/346-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) հասցեով ստացված բեռը (դեղ՝ Պրեզիստա 600 մգ. N 60-9 տուփ 1 տեղ, 1,886 կգ քաշով, 6264 ԱՄՆ-ի դոլար արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» Մ/Տ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-1074-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**25 հունվարի 2013 թվականի N Մ- 058 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N Մ-361-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի 2013 թվականի հունվարի 8-ի N 0113/ԱԴՄ/001 գրությունը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունվարի 11-ի N 3.1/3.8-2/50-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի հունվարի 14-ի N ԴԴ/22/165-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունվարի 11-ի N ՎՄ/3-6/90-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 14-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-361-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «31-ը դեկտեմբերի 2012 թ.» բառերը փոխարինել «28-ը փետրվարի 2013 թ.» բառերով:

2. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով Ֆրանսիայից ստացված բեռը (դեղորայք և վիրաբուժական պարագաներ՝ 48 տեղ, 264 կգ ընդհանուր քաշով, 21214.77 եվրո արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1815.23 եվրո, ցանկը կցվում է, «Ջվարթնոց» Մ/Տ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

## *Ստացվող բեռի ցանկ*

*համաձայն N 107732,107670, 107944, 107664, 107747, 107682 հաշիվ-ապրանքագրերի*

| Նո | Անվանում | Քանակ | Գին/Եվրո |
|---|---|---|---|
| 1 | Լևոռուպիվակայինի հիդրոքլորիդ, 5 մգ/մլ, 10 մլ ամպուլ | 100 | 313.40 |
| 2 | Տուբերկուլին, 5UI/0.1 մլ, բազմաչափաբաժին, 1 չափաբաժին, սրվակ | 500 | 461.50 |
| 3 | Արյան նմուշների հավաքման փորձանոթներ QFT (TB Gold) HA, 100 անձի | 1 | 997.75 |
| 4 | QTF (TB Gold) ELISA հավաքածու, 192 հայտնաբերումների համար | 3 | 2196.03 |
| 5 | Ջերմամեկուսիչ արկղ | 1 | 37.63 |
| 6 | Աուտամին/Ռողամին ներկանյութ, 4 x 200 մլ | 80 | 7854.40 |
| 7 | Ստերիլիում ալկոհոլային ձեռքի մաքրող միջոց, լուծույթ, 500մլ, շիշ | 5 | 27.65 |
| 8 | Պիտակ, կպչուն, A4, 16 միավոր, 105x35մմ | 100 | 4.72 |
| 9 | Նադրոպարին, 2850 UI/0.3 մլ, ներարկիչ | 30 | 37.62 |
| 10 | Ներարկիչի ինֆուզիոն մղիչ, մեկանգամյա օգտագործման, ՊՎՔ, 200սմ | 100 | 55.16 |
| 11 | (հերձաղանակ n° 3 և 7) սայր, միանգամյա օգտագործման, ստերիլ, n° 315, 01-22-15 | 200 | 13.82 |
| 12 | Ֆիլտր, շնչառական սարք, 22M/15F, չափահասի և մանկական, ստերիլ, մեկանգամյա օգտագործման | 100 | 175.92 |
| 13 | Ներարկիչի մղիչ (Prefusor® compact) մեկ ներարկիչով | 1 | 872.20 |
| 14 | (ներարկիչի մղիչի) ներարկիչ, միանգամյա օգտագործման, Լուեր Լոկ, 50 մլ | 100 | 67.69 |
| 15 | Դրենաժ, կրծքային + երեքսայրի չափափող, ստերիլ, միանգամյա օգտագործման, CH30 | 10 | 158.40 |
| 16 | Թթվածնային դիմակ, մեծահասակների չափով, անոթով | 10 | 8.20 |
| 17 | Թթվածնային դիմակ, բարձր կոնցենտրացիա, մեծահասակի չափով | 50 | 137.83 |
| 18 | Փորձանոթ, արտածծման, կոնաձև ծայրադիրով, 50 սմ, մեկանգամյա օգտագործման, CH14 | 50 | 8.50 |
| 19 | Կրկնակի լումեն ձախակողմյան բրոնխիալ խողովակ, CH35, միանգամյա օգտագործման, ստերիլ | 1 | 45.12 |
| 20 | Վերքը կարելու ներծծվող ոլորաթել և ասեղ, DEC2 (3/0), 1/2 22 մմ, կլոր | 108 | 304.47 |
| 21 | Կարի ներծծվող ոլորաթել (2/0) ասեղ 1/2 30 մմ, կլոր | 72 | 203.58 |
| 22 | Կարի ներծծվող ոլորաթել (1) ասեղ 3/8 50 մմ, կլոր | 108 | 362.76 |
| 23 | Կարի չներծծվող մանրաթել (3/0) ասեղ 1/2 18 մմ, կլոր | 72 | 193.74 |
| 24 | Կարի չներծծվող մանրաթել (2/0) ասեղ 2/8 30 մմ, տրիող | 72 | 100.28 |
| 25 | Դրենաժ, կրծքային + երեքսայրի չափափող, ստերիլ, միանգամյա օգտագործման, CH14 | 4 | 55.76 |
| 26 | Դրենաժ, կրծքային + երեքսայրի չափափող, ստերիլ, միանգամյա օգտագործման, CH24 | 20 | 316.80 |
| 27 | Փորձանոթ, արտածծման, կոնաձև ծայրադիրով, 50 սմ, մեկանգամյա օգտագործման, CH16 | 100 | 17.00 |
| 28 | Վերքը կարելու ներծծվող ոլորաթել և ասեղ, (0), 1/2 31 մմ, կլոր | 72 | 204.84 |
| 29 | Վերքը կարելու ներծծվող ոլորաթել և ասեղ, DEC4 (1), 1/2 40 մմ, կլոր | 108 | 306.60 |
| 30 | Քթի թթվածնային կանյուլա, [illegible]երի, ռետինե խողովակներ | 50 | 41.00 |
| 31 | Դրենաժ, կրծքավանդակ[illegible]ման, արտածծող | 14 | 164.64 |
| 32 | Փորձանոթ, թթվածնի, [illegible] ծայրադիր[illegible] սմ, մեկանգամյա օգտագործման, CH10 | 100 | 24.62 |
| 33 | Չներծծվող ցանց պոլի[illegible]0 սմ | 3 | 241.77 |
| 34 | Փորձանոթ, արտածծ[illegible]0 սմ, մեկանգամյա օգտագործման, CH08 | 100 | 16.00 |

| | | | |
|---|---|---|---|
| 76 | Կրկնակի լումեն ձախակողմյան բրոնխիալ խողովակ, CH37, միանգամյա օգտագործման, ստերիլ | 15 | 676.80 |
| 77 | (Հեմոգլոբինչափիչ Hb 201+/301) մաքրող նյութ, տուփ, 5 հատանոց | 1 | 11.65 |
| 78 | (Հեմոգլոբինաչափիչ Hb 301) միկրոկյուվետ, մեկանգամյա օգտագործման | 200 | 71.72 |
| 79 | Հեմոգլոբին ֆոտոչափ (Հեմոգլոբինաչափիչ Hb 301), պատկերավոր | 1 | 358.59 |
| 80 | Մարտկոց չոր խցում, ալկալային, 1.5V, R6 (AA), 4 հատանոց | 3 | 3.84 |
| 81 | Թենոց, բազկային պարագծի չափման, (MUAC), մանկական, PP 115մմ | 10 | 2.70 |
| 82 | Չափիչ գործիք, ժապավեն, ուղղահայաց, 200սմ | 15 | 140.85 |
| 83 | Կշեռք, Salter տեսակի, 0-25կգ, առանց անդրավարտիքի, 100գ | 1 | 21.87 |
| 84 | Անդրավարտիք Salter տեսակի կշեռքի համար | 2 | 6.52 |
| 85 | Ռադիացիային պաշտպանող գոգնոց, առաջամաս, 0.35մմ, Pb համարժեք, L | 1 | 356.45 |
| 86 | (Ուլտրաձայնային պուլվիրիզատոր, Ultraneb), դեղերի խցիկ, sp | 48 | 89.40 |
| 87 | Տուփ, տակդիրով 81 կրիոփորձանոթի համար (1-2մլ) | 5 | 15.70 |
| 88 | Կրիոխողովակ, պլաստմասե, հարթ հատակ, պտուտակավոր կափարիչ, 2մլ | 1000 | 80.00 |
| 89 | Ավտոմատ կաթոցիչ, բազմատար անցքերով 8), պահուստային քանակ 100մլ | 5 | 6.85 |
| 90 | Eppendorf բազմատար անցքերով կաթոցիչ, 8 անցք) ծայ[illegible]0ul | 1000 | 33.78 |
| 91 | Պատվաստանյութի արկղ, 2.6 լ, (Gyo Style) + 8 սառը [illegible] | 2 | 76.20 |
| Ընդամենը | | | 21214.77 |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**ՈՐՈՇՈՒՄ**
**25 հունվարի 2013 թվականի N Մ- 059-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-Ի N Մ-451-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 21-ի N 3/3.8-1/16933-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 21-ի N ԴԴ/ 22/12866-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի դեկտեմբերի 26-ի N ՎՄ/3-4/13954-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ի (ՀՎՀՀ՝ 01243384) կողմից իրականացվող գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2012 թվականի հունիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի աջակցություն» ենթադրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-451-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի N Մ-1080-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝ «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2012 թվականի ապրիլի 6-ին կնքված N ՏԱԳ-ՇՀԾՁԲ-3/12 պայմանագրի 2012 թվականի դեկտեմբերի 14-ին կնքված համաձայնագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի ընթացքում տեղադրված 19 պիլոտային կետի սպասարկման ժամկետի երկարաձգում 2013 թվականի հունվարի 1-ից մինչև մարտի 31-ը ընկած ժամանակահատվածում «Ինտերնետ» կապի ծառայությունների մատուցում՝ և 2013 թվականի հունվարի 1-ից մինչև մարտի 31-ը ընկած ժամանակահատվածում 12 նոր պիլոտային կետի «Ինտերնետ» կապի տրամադրման և սպասարկման ծառայությունների մատուցում՝ 602470 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ      Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**25 հունվարի 2013 թվականի N Մ- 060 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N Մ-927-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագիր)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի հունվարի 17-ի N N ԱՔ/15-1/314-13 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունվարի 23-ի N 3.1/3.8-1/695-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունվարի 24-ի N ՎՄ/3-8/733-13 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 30-ի «Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-927-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պացիենտների իրավունքների պաշտպանության կենտրոն» ՀԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00257088) 2012 թվականի նոյեմբերի 30-ին կնքված՝ N ՀՀ ԱՆԳ-ՊԸԾՁԲ-12/7 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է «Պալիատիվ խնամքի փորձարկման» ծառայությունների ձեռքբերում՝ 17920000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**25 հունվարի 2013 թվականի N Մ-061 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-Ի N Մ-360-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («Ձայնալարերը հեռացվածների միավորում» Հասարակական կազմակերպություն)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունվարի 17-ի N 3.1/3.8-1/380-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունվարի 21-ի N ՎՄ/3-4/557-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Սահմանել, որ «Ձայնալարերը հեռացվածների միավորում» հասարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Երևան, Աճառյան 5/2, ՀՎՀՀ՝ 01003935) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 4-ի «Ձայնային խնդիրներ ունեցող հաշմանդամների ռեաբիլիտացիա» բարեգործական ծրագրի մասին» N Մ-360-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Հյուսիս» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2009 թվականի մարտի 26-ին կնքված՝ N 009657 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2013 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների մատուցում՝ 250000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի Երևանի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2011 թվականի հունվարի 1-ին կնքված՝ N Կ-013.01.11.96 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2013 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գազամատակարարման ծառայությունների մատուցում՝ 450000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**25 հունվարի 2013 թվականի N Մ- 062 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-1074-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի հունվարի 17-ի N ՍՔ/15-1/308-13 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունվարի 23-ի N 3.1/3.8-1/692-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունվարի 24-ի N ՎՄ/3-8/734-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» ծրագրի մասին» N Մ-1074-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01232586) 2012 թվականի դեկտեմբերի 19-ին կնքված՝ N ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՇՀԱՊՁԲ-11/15-12/13-6 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է քիմիական նյութերի և բժշկական պարագաների ձեռքբերում՝ 679166.68 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**25 հունվարի 2013 թվականի N Մ- 063 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-1076-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ** («Հայաստանի Հանրապետությունում տուբեր-կուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2013 թվականի հունվարի 11-ի N 01 գրությունը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հունվարի 18-ի N 3.1/3.8-2/459-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հունվարի 16-ի N ՎՄ/3-6/349-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի մասին («Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր)» N Մ-1076-Ա որոշման 1-ին կետում «(1 տեղ, 297 կգ քաշով, 57723 ԱՄՆ-ի դոլար արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը,» բառերը փոխարինել «(3 տեղ, 159 կգ քաշով, 57723 ԱՄՆ-ի դոլար արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը,» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**25 հունվարի 2013 թվականի N Մ- 064 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-1076-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ** («Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2013 թվականի հունվարի 21-ի N 27 գրությունը* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի մասին («Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր)» N Մ-1076-Ա որոշման 1-ին կետում «(2 տեղ, 509 կգ քաշով, 62847 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1666,8 եվրո,» բառերը փոխարինել «(3 տեղ, 522 կգ քաշով, 62847 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1727,76 եվրո,» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                    Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ